Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20061

891.99-199
G-93

Г. Мурлыкин

КОПЫЙ
НЕМЫКОЛ

891.99-192
Ե-93
ա.գ.

ՆՈՐ
ԵՐԳԱՐԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ։

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱՑ

Գրավաճառանոցն Տէր Միքայէլեան և ընկ"։

Հ.Հ.Հ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
именна. Мясникяна
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
17/17
10001/85-53

ՏՓԽԻՍ
1864
'Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ"։

Լցնել ամսեկան 20 այս թվականս
գալ-ուց սրվիսկս խ.խ.շտե խնդ

34065-4.h.

Дозволоно Цензурою. Тифлисъ. Апрѣля 25, 1864 года.

1

ՆԿԱՐԻՉ. (*)

Ամենապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի ուր ես մրոտքով մոլորած.
Ներկ ու վրձիններ ցիր—ցան առաջիդ,
Վրձնայ կրտաւը քու հանդէպ փրռած.

Շուռ-տուր աչերդդ, նայէ դէս ու դէն,
Տես, քեզ ծաղրումէ անմիտ ամբոխը,
Զարթիր, սիրելի, այդ անուշ քընէն,
Գոնէ մի անգամ հանէ քու ոխը:

Բայց դու ներումէ ես նոցա վեհ հոգւով,
Խուլ ես աշխարի ունայն շըշուկին. . .
Յանկարծ աչերդդ փայլեց սուրբ շնորքով.
Հրսկայի սիրտդդ թընդաց խիտ ուժգին:

(*) Գործ Ռ. Պատկանեան

№ 2003

Առիր վրձինը՝ թաց-արիր ներկով,
Շունչ տուիր անշունչ կտաւին՝
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին։

Սէր, առեղութիւն, հանճար, բարկութիւն
Տուիր պատկերին մատիդ շարժուածով,
Ինչ-որ չի յայտնեց ճարտարի լեզուն՝
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով։

Աղջեց ամբոխը՝ վազեց յառաջեց
Քու կենդանադիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմռուռս ու հարուէ խընկեց՝
Գոչեց մեծաձայն՝ «Դա է իմ Աստուած»։

Բայց, ա՛խ, քու անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հապիւ դին դրին,
Սառեցուդ դարձար քու խեղճ խրճիթը,
Ակներ շարեցին շուրջ քու պատկերին։

2

ՍԱՅԼՈՐԴ՝

Հա՛ սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թռչում

Եւ Վալդայի տխուր զանգակը
Կամարի տակ է զօղանջում։

Արթուն սայլորդը գիշերուայ դէմ
Իւր վիճակի վերայ տխրեց,
Եւ սիրեկնի աչաց կարօտը
Նա տխրադին ձայնով երգեց։

«Կապուտ աչեր, կապուտ աչեր,
Կըտրիճիս կեանքը մաշեցիք,
Ինչո՞ւ, ինչո՞ւ դուք չար ոսխներ,
Ինչո՞ւ սրտերըս բաժնեցիք։

«Մընաս բարեւ իմ տուն հօրական,
Մընաս բարեւ իմ սիրական,
Ես կը հանդչիմ՝ զինչ բոց կըրակին
Այս անբընակ դաշտի միջին։

«Արեւիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհումն-էլ որք եմ ես,
Սըրտիս կարօտը աղջկայ տեսնելից
Մինչեւ 'ի մահ դրկած եմ ես»։

Այս-որ ասաց՝ շարժեց մըտրակը,
Երեք ձիանց ոտքին խըփեց,
Իւր սիրեկնի պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց,

3

ՈՒՍԱՆՈՂ։ (*)

Այն ի՞նչ ապդ է, այն ի՞նչ ցեղ է.
Որ միշտ անկախ է.
Որոյ տունը ամեն տեղ է
Եվ անվրդով ուրախ է։

Ուսանողն է այն զբաղարթ մարդը, (կրկնէ.
Կենաց քէֆն է նորա ցանկացած բանը։ (

Այն ո՞վ է արեւ ծագելիս՝
Ինքն-էլ զարթուում է,
Ու քաղքը ձայնով երգելիս՝
Փողոցներ չափում է։ Ուսանողն է, և այլն։

Ո՞վ երբէք սէրից չի վախում
Ու միշտ հարս ունի,
Ու իր անճոխ, անպերճ կեանքում
Դարդ ու հոգս չունի։ Ուսանողն է, և այլն։

Ո՞վ է միշտ առաջին կրռվում
Հայրենեաց համար,

(*) Գրած Ռ. Պատկանեանէ։

Փայլուն գինին շիշով կանծում
Ուրախ, բայց արբար։ Ուսանողն է, և այլն։

Եղբա՛ր՝ դուք որ այն ազգին է՝
Գինին պատուեցէք,
Ուսանողական պատիւը
Հաստատ պահեցէք։
Իրաւ մենք ենք այն զուարթ ազգը, (կրկնէ։
Կենաց քէֆն է ամենուս ցանկացածը,

4.

Աստուծ լուսաբեր Հայաստան երկրի,
Բուրաստան Դաւիթեան կողմանցն Հիւսիսի,
Նախկին լուսաւորիչ, պրսակ պանծալի.
Թադէոս Առաքեալ՝ ընդէ՞ր կաս հեռի։
Ո՛հ ո՛հ, մանկունք Սիօնի, (կրկնեա՛)
Պար առեալ ցընծացէ՛ք 'ի սոյն խընջոյի։

Ընդարմացեալ բուսոց ջուր կենդանութեան,
Հոգւով որոմեցելոց բաժակ բերկրութեան.
Դու պարիսպ հաւատոյ, նեղելոց պաշտպան,
Թադէոս Առաքեալ, և այլն։

Երգնակ աւետարեր կենաց փրկութեան,
Շուշան լուսատեսիլ գուշակող գարնան,
Ցուցաք մեզ բարեաց շընորհ էական.
Թադէոս Առաքեալ, և այլն:

Զօրութեամբ տուրբ Հոգւոյն զաշխարհ արարեր,
Թորգոմեանքն ազգի լոյս մեծ ծագեցեր,
Զտուրբ կոյսքն Սանդուխտ յերկինս վերացեր,
Թադէոս Առաքեալ, և այլն:

Ե.

Առաւօտեան քաղցր և անոյշ հովերքն
Մեղմեալ հընչեն մեղմով թրփոյդ քովերքն.
Արդ ծաղանին աչացս լցեալ ծովերքն.
Բացի՛ր բացի՛ր, իմ կա՛միր վարդ պատուական,
Գեղեցիկ նըման արեգական վառվառման:

Քանի՞ ողբամ, նոր 'ի նորոյ խոցոտիմ,
Զփայլուն գեղեցիկ 'ի մեռ բերեալ՝ բոցոտիմ,
Յորդ արտասուօք ցայգ և ցերեկ թացոտիմ: Բացի՛ր, և այլն

Զմեռն էանց՝ ես քեզ կարօտ մընացի,
Սիրեմ, տապիմ որպէս ըզհուր հընոցի,

Քեզ շատ օրեր ես 'ի ձեռաց զընացի. Բացիր, և այլն։

Տեսեալ զծաղկունս՝ զանմեն ինձ փուշ վարկանեմ,

. . . . . .

Յաւ իմ սրտի ահա՛ քեզ յուշ արկանեմ։ Բացիր և այլն։

Արքայարան Բիւզանդիոյ մեծ շինի,
Տեղ և բընակ յարմարեալ քեզ յարկ լինի.
Ներաւակաւեօք յիշատակ քո ոչն լինի։ Բացիր, և այլն

6. (*)

Ասում ես՝ զիմացիր. ո՞նց զիմանամ, մի՞թէ եմ քար,
Դարձիս արա՛ մէկ ճար։
Կեանքըս մաշել ես բոլորովին, ամենը խաղառ,
Էս ցաւն է զըժուար։
Էսքան նեղութիւն ինձի մի՛ տար անողորմաբար,
Ո՛վ դու իմ սիրահար։
Շատ վախտ է քաշում եմ կարօտըդ, չես գալի երես,
Մինչ ե՞րբ զիմանամ ես։
Իմ անբաղդութիւնն ինձի բաւ է՝ մի՛ անիլ էդպէս,
Կեանքըս արեցիր կէս։
Ողորմութիւն արա՛ աղքատիս, քաշիր մօտըդ տա՛ր—
Տանջիլ մի՛ չարաչար։

(*) Գրած Ս. Դաւիթ Ս. Գրիգոր ազգային տէրտէր

Վարդս սրտումս է նա, վարդս աչքումս է նա, վարդս
վիճումս է նա շատ։

Անձրևում եմ կաթ կաթ։
Վախս բարկանում է՝ վախս հեզանում,
կամենում է նա շատ,
Սարսափում է աշխարհ։
Զարդերի խօսքերը քիչ խրատ են արել,
Խիստ շատ վատ են արել։
Ուրիշների հետ սէր անելը արգիլ են արել,
Ինձի եարդ են արել։
Ես իմ բաղդին եմ դանդատուել, միշտ և մուղարար,
Ինձ չի տալիս դաթար։
Անդին պարզեւ ցոլ պարզևում բան քոյոց գ.քոյս
Բաղքաջ են նորաբոս։
Ե՛կ, սէր իմ ապին, ապաշում եմ, խղճա՛ խղճալուս
Տո՛ւր բաւականին յոյս։
Էլ ինքդդ էս անուանելի ցաւին դրան հընար,
Ինձ մի՛ թողուլ անձար։
Ցաւերդդ ինձ են տալիս, ուրիշներին քաղցր խօսքերդդ,—
Ինձ էս է քու խէրդդ²
Ինձնից աւելի, ասա՛ անանիմ, ո՞վ է քու սէրդդ,
Ինձ նա տայ քու սէրդդ։
Դու քու զարդերդդ լաւ դիտես, խեղճ Սդամ—Սդքար,
Խալին ի՞նչ է խաբար։

7.

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ։

Արէք որ երթամք
Բիւլբիւլի երամք,
Ծաղիկ բացուեցաւ,
Միշտ փառօք ցընծամք.
Արի՛, գովելի,
Գովելի՛ լի՛, (երիցս)։

Ծաղկունքըն զարնան՝
Բիւլբիւլ անելման
Զայնիւ ցընծալով
Եղանակ բառնան։
Արի՛, գովելի, և այլն։

Եւ մի՛ք երգեցուք,
Սիրով գոչեցուք,
Եւ 'ի ժամ զարնան
Միշտ փառաց տացուք։
Արի՛, գովելի, և այլն։

Ելայք սիրեցուք,
Զմիմեամբ փարեցուք,
Ի հանդէպ վարդին
Պարուք բերկրեցուք։
Արի՛, գովելի, և այլն։

Զայնիւ երգեցուք,
Սիրով գոչեցուք,
Եւ 'ի դէմ վարդին
Միշտ ողողեցուք։
Արի՛, գովելի, և այլն։

Ահա՛, ցընծացուք,
Ի պարտէզ հացուք,
Դու միշտ ցանկալի՝
Եկ ուրախացուք։
Արի՛, գովելի, և այլն։

Ը.

ՍՈՒԳ ԶՈՒՂԱՅԵՑՈՒՈՅ։

Ախտա՞ս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Յիրուցան եալք անմեղ անխորհուրդ,
Գերի գնաման աք գէպ 'ի Խորասան,
Գաղցած ու ծարաւ, տրկլոր թշուառական,

Խարիւր ու խաղար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ուրք դուրս չ'գրաք,
Խիմի ձեր լսօր մօր գերեզման թողաք,
Տներն ու ժամերն ուրիշի տուաք,

Էն սիրուն դաշտերն մեծ մեծ քաղաքներն.
Գաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,
Ո՞ւմն աք թողման, որ գընաման աք,
Էսպէ՞ս կու լինի որ մոռանում աք։

Վախում ամ էնպէս մոքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մոքերնուդ չ'ընկնի,
Բարի ձեր որդւոց, թոռանց պատմեցէք,
Էսպէս խայրենիք քանդած թողեցիք։

Մասիսի անուն, Հայոց տատրանի,
Արարատ դաշտին, սուրբ Էջմիածնի,

Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զ՝մռանաք մինչ՝ ի օրն դատաստանի։

Աչքըս կուրանար, շլինքըս կտրուէր.
Խեղճ Հայաստան, քեզ էապէս չ՝տեսնէր.
Թէ մեռաց էի, ինձ երանի՜ էր,
Գան Թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր։

9.

ՀԱՅՈՑ ԳԻՆԻ։ (*)

Բաժակներ առնուք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անոյշ համով։

Բերներիս տանենք անվախ,
Զէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է եւ ո՛չ գինի.
Խմենք՝ մեզ անոյշ լինի։
Արաքսայ ջրով ցողած,
Հայոց արեւով հասած,

(*) Գրած Ռ. Պատկանեան։

Հայոց աղջիկ է քաղել
Գլխիցդ ձեռներով քամել,

Այս բերքն է Հայոց երկրին,
Հայաստան ընկած ներին,
Անմահ երկնային գինին
Նա խմեց, երբ իջաւ Սարէն։

Այս անոյշ գինին խմողը՝
Սրտէն թոռ հանէ ոխը.
Ամենքս—էլ ասենք «ամէն»
Որ շատ տայ մեզի ամէն

10.

ՋՀՈՒԴԻ ՏԱՂ։

Բարև քեզ Ըստեփան,
Էս ի՞նց Հրաստալի բան,
Ես եկայ քեզ պատմեմ,
Քեզնից վասխերը առնեմ։

Ես սատ խոնար մարդ եմ,
Ոչ դէր, այլ լղար եմ։
Բայց իմ սատ անոյտ հոգին
Ոսկիի պէս ունի գին։

Թէ ուզում էս՝ մորթէ,
Թէ ուզում էս՝ ճարթէ,
Թէ ուզում էս՝ ես թաղվիմ,
Տուր նախ վասխերը արնեմ՝

11.

ԲԼԲՈՒԼ ԱԻԱՐԱՅՐԻ։ (*)

Ո՞վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երդէ բըլբուլիկդ, երդէ 'ի սարէդ,
Զքաջն Հայոց Վարդան երդէ հոգւոյս հետ։

Թաղէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս որ 'ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ,

(*) Գործ Հայր Ղևոնդի Ալիշան Մխիթարեան վարդապետի։

Ի խաչին թեւէն թըռայ ու հասայ,
Գըտայ զքեզ 'ի դաշտ քաջին Վարդանայ։

Բըլբուլ՝ քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ՛ հաւ բըլբուլ մեր Աւարայրին, —
Եղիշեայ հոգեակն է քաղցրաձայնիկ,
Որ զՎարդան 'ի վարդ տեսնու կարմրիկ։

Զըմեռն յանապատ/կու դնայ կայ 'ի լաց,
ՅԱրտալ գայ գարունն 'ի թուի վարդենեաց
Երգել ու կանչել ձայնիւ՞ Եղիշեայ,
Թէ պատասխանիկ արդեօք Վարդան տա՞յ։

12.

ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ։ (*)

(երգ օրհասականի)

1.

Գարունն է եկել նախշուն թեւերով,
Նախշուն թեւերը պէսպէս ձեւերով,

(*) Գրած Ռ. Պատկանեան։

Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։

2.

Երկինք ու երկիր քեզ ասենն, գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն,
Դա անձրև ցօղէ առատ 'ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկեր հաւերուն.

3.

Ոսկի արեւը փայլէ քեզ վերէն,
Կենտաբեր հովը փչէ 'ի ներէն,
Ա՜խ, ապնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տերէն։

4.

Գլխաքարշ երթամ 'ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես ան օրն 'ի բուն,
Զի կայ ինձ հանդիսաւ, ցնծութիւն արտիս։
Ես վաղ եմ մռայլ՝ զի՞նչ անդորր է քուն։

5.

Մեռած պատանեաց գեանին կեանք տուար,
Տերեւթափ ծառին ստուերախիտ արար.

Քեզ Թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ա՞նձ մէնակ խղճիս էապէս մոռացար։

6.

Առաջ—գնա՛, զարուն զէպ Հիւսիսն 'ի խոր,
Գնա՛, կանանչցո՛ւր զու անդ սար ու ձոր.
Ոլոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարեւ,
Փ'ուրախ զալըստեամբ նոցա զուարճացուր։

7.

Կու զաս զալ տարի՝ զու. ինձ կուզանես
Ո՛չ 'ի մեր այգին և ո՛չ 'ի պարտէզ,
Այլ անզարթ քընով հողի տակ պառկած,
Գնդեզմանատար մի վրաս կու տեսնես։

13.

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն
Եկեալ ասա զամբիւղօք 'ի Հայոց երկրէն,
Յուսամ, զի Հայ տիկնայք և պարոնայք Հընդկաց
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբղաց.
Ա՛ռ զամբիւղ (3) յօտար աղջկանէս:

ԶԱրարատ, զԵփրատ և զՏիգրիս թողի,
Միայնակ շրջիմ ասա յերզերս Գանգէսի.
Պանդուխտ եմ, օգնեցէք անտերունչ անձինս.
Զի ծնողք ձեր յառաջ ասա պանդուխտ էին,
Ա՛ռ զամբիւղ, և այլն:

Զամբիւղք իմ են յարմար ասղնեգործութեան՝
Պահել անդ գմաւոց, զթել, զասղամանս.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,
Երբ խաշինք և գառինք իմ զենիւ խայտան:
Ա՛ռ զամբիւղ. և այլն:

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայսմ աշխարհի
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի.
Զայդի մի ունէի՝ զամբիւղ գործէի,
Լոկ կախարդմամբ և պանրով երջանիկ էի:
Ա՛ռ զամբիւղ, և այլն:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
ՄՈՍԿՎԱ, Масква
Ա. ՍՅԱՍԱՆԻՑԱՆԻ ԱՆՎԱՆ
(1001/853) (7117-3)

Աստ սերկևիլ, ծիրան և խաղող չի կայ,
Բայց միայն, ափիա քիլա և ատա,
Ա՛խ, ե՞րբ էյէ, պի արժանի եղեց վերըստին
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին։

Ա՛ռ զամբիւղ և այլն։

Ապա դուք լաւ տիկնայք՝ զամբիւղս իմ առէք,
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք.
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
Զերախտիս ձեր առեալ՝ դովեցից բազմօք։
Ա՛ռ զամբիւղ (3) յօտար աղջկանէս։

13

ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿ։(*)

1.

Դու տեսա՞լ ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս.
Կամ թէ կանանչ տերևի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս

(*) Գործ Ռ. Պատկանեան։

2.

Դու տեսնել ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փթթթած։
Շուշան, մեխակ ու նունուֆար
Զորս բոլորքը պար բռնած։

3.

Բայց լուսինը խիստ խաւար է
Հայ աղջկայ առաջին,
Ծիրան, մեխակ, վարդ, նունուֆար
Չ'արժեն նորա մեկ պաչին։

4.

Երկու թրշին վարդ են նըստել,
Ճերմակ ճակտին՝ մի շուշան,
Ցպիտը բերնից ցած չի գալի,—
Անմեղութեան է նըշան։

5.

Տես՝ նա առաւ կարմրըելով,
Իր ընկերից դահիրան,
Դըմբդըմբեցուց փափուկ մատով
Ու ըսկըսեց լեզվինկան։

6.

Նազուք մէջքը ծառի նման
Տատանում է զեղեցիկ,
Մէկ թռչում է նա անդումն,
Մէկ գընում է խիստ հեզիկ։

7.

Հալվում է խեղճ կըարիճները
Սիրաը՝ նորա տեսնելով.
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացաւ խիստ շուտով։

15. (*)

. . .

Դուն էն-զլխէն իմաստուն իս՝ խիլ.քըդ յիմարին բաք մի՛ անի,
Էրազումըն տեսածի հիա միզի մէջ հէսաբ մի՛ անի,
Ես խօմ էն-զլխէն էրած իմ՝նուր-մէկանց քաբաք մի՛ անի,
Թէ վուր՝ զիտիմ, բէզարիլ իս՝ ուրիշին սաբաք մի՛ անի։

(*) Գործ Սայեաթ-Նովայ թիֆլիզ.

Զը կայ քիչ պէս հուքմի հէքիմ դուն Բօսոմի Զալ թաղաւոր.

Սղջըզ ազգերում գոլաց, համ դուն խս գոպալ թաղաւոր.

Թէ էանց-էլ սուչ ունենամ՝ գլուխս արա՛ տալ, թաղաւոր.

Մալիկ-արա՛ քաւ Սալիջողին, նահախ տիղ ղազաբ մի՛ անիս

Եարաբուն հէքիմն էնդուր կ'ուզէ՝ ղիկ տալու է, ցաւ տալու չ'է,

Քանի կ'ուզէ արբաբ ըլի՝ զուլըն աղին դալ տալու չ'է։

Դուն.քու սիրտըն իստակ պահէ՝ հադի խօսքը աւտալու չ'է։

Աստուծաւ սէրն կանչողի պէս գլուռնէմէդ Ջուզաբ մի՛ անի։

Ամէն մարդ չ'ի կանա խըմի իմ Ջուրն՝ ուրիշ Ջրէն է.

Ամէն մարդ չ'ի կանա կարդա իմ գիրն՝ ուրիշ գրէն է.

Բուն իաթս աւաղ չ'իմանաս՝ քարափէ քար ու կրէն է.

Սէլավի պէս առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի,

Քանի կ'ուզէ քամին տանէ՝ ծովէմէն աւաղ չ'ի պակսի.

Թէկ'ուզ ըլիմ՝, թէկ'ուզ չ'ըլիմ մէջլիանէրուն սաղ շ'ի պակսի.

Թէ կու պակսիմ, քիչ կու պակսիմ՝ աշխարէմէս մաղ չ'ի պակսի.

Սայաթ-Նովա զերեզմանէն հինգ, հարիւր, Արաբ մի՛ անի։

15.

ԿԵՆԱՑ ԲԱԺԱԿ։

Եղբարք՝ մի շուրջ ժողովեցէք,
Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,
Բաժակները դարձրեցէք (
Մեր Հայ ազգի կենացը։ (կրկնէ։

Հայոց երիտասարդներուն,
Հայրենիք պաշտպանողներուն,
Որոց անկումն-էլ սուրբ է մեզ—
Այս բաժակը նուիրենք։

Հայ աղջիկներու կենացը,
Ոչք միայն Հայ մարդ կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն,—
Այս բաժակը դարձրեկենք։

Արանց, որ մեր սիրան գրաւում են,
Մեզ զգօն ճամբով վարում են,
Որոց կեանքը մեզ օրինակ,—
Մի երրեակ «կեցցէ» ասենք։

Եղբարց, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտի անդամ եղել են,

Որոց ուխտը միշտ սիրում է,—
Այս բաժակը նրա իրենք։

Եղբարց, որք գարդից ազատ են,
Մահուան հանգիստ վայելում են,
«Ողորմի հոգուն» ասելով
Այս բաժակը նրա իրենք։

Բայց որ դեռ գինին վայելում է
Ու մեզ իրան մոտ կանչում է
Բաժակները դարդ ելեցէք
Որոր Հայի կենացը։

16.

ՈՒՍԱՆՈՂ։

Երբ-որ հողից մարդ դարձայ,
Երբ Աստուածանից հարցայ,
Թէ՝ ի՞նչ վիճակ ես ուզում։)
Ասի՝ ուսանողութիւն։) կրկնէ։

Աստուած ուզեց զարդարել
Ինձ, դիպայ շորեր կարել.
Ասի՝ էն դու կանանց տուր,
Ինձ մի նըշանագրեատ տուր։

Կապուտաճըղի գըրդակ տուր,
Մէջքս կապէ՛ հատու տուր.
Մառանումըս լաւ. գինին
Թող միշտ անպակաս լինի։

Իմ սիրելի նապելին
Մնայ ինձ միշտ հաւատարիմ.
Փըղըշատցի ախոյեան՝
Տե՛ս՝ իմ տէրն է իմ պաշտպան։

Ով չի իլել ուսանող՝
Լաւ է, որ միշտ մընար հող,
Քանց Աստուծոյ լոյս արեւն
Ունայն տեղը վայելէր։

Ով չի կռնծել երդելով,
Ընկերաց հետ պարելով,
Նա չըգիտէ ցընծութիւն,
Եղ՞ուկ սըրտին, վա՛յ հոգուն։

Ով չի երդուել ընկերաց
Պաշտպան լինել հայրենեաց,

Վերջի արիւնը թափել,
Հայրենիքը պաշտպանել.

Մեզնից էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թող ում ուզէ կարգն ընկնի ։
Մեր մէջ դա թող չի մընանի ։

18.

ԾԽԱԽՈՏԻ ԵՐԳ ։

Թէ ծխաքարշը ձեռքս
Սենեակումըս նստած եմ,
Գլխիցս ծուխ հանելիս
Կարծում եմ թէ՝ իշխան եմ.
Երբ քամին ծուխըս փչի,
Ես պինդ ծիծաղում եմ,
Ասում եմ՝ մեր գործերը
Էսպէս անցաւոր են ։

Աղնիւ խոտ՝ դու զօրութիւն,
Կեանք ու ուժ ես ինձ տալի,
Ա՛խ կարնայի քեզ գովել,
Ինչքան սիրտըս է տալի.
Ո՛վ երկինք՝ տո՛ւր էս խոտին
Դու արև և անձրև շատ,
Եւ սրա մըշակողին
Օրհնութիւն, կեանք ու բաղդ։

Մենակութեան ժամանակ
Դու ինձ լաւ ընկեր ես.
Թէ իմ սիրտըս նեղանայ՝
Քեզ կ'առնեմ ես ձեռըս։
Թանկ ես. թուրքի ծըխախոտ,
Հարուստներու բան ես,
Հոգիս-էլ տամ՝ քեզ կ'առնեմ
Ու կ'ածեմ զըրպանըս։

Ինչքան-էլ դատարկ լինի
Փողերիս քըսակը,
Պէտք է անպակաս լինի
Բերնիս ծըխաքարշը։
Ուսանո՛ղ՝ առ ծըխաքարշըդ.
Շուտ կ'անցնի քու կեանքը,
Ու ծըխելով մեռք արա՛,
Ունայն է աշխարհքը։

19·

ԹԻՖԼԻԶԻ ԳԷՖ։ (*)

Թե սիրում իս Թամաշա, Հազար-փէշէն լի գինով
Պըտիս տեհնի քաղքումը Կըկըլացնում խըմում ին,
Ի՞նչ ին անում Համաշա Տիկը բըռնած պինդ ձեռով,
Մարդիկ իրանց բաղչումը։ Իսկի ասիս՝ Թողնում ին։

Հալի-հալէ, հալի-հալէ, Գաչալ գըլուխ զուռնաչին
Էս ին անում քաղքումը, Հառալօ է որ փըչում,
Հալի-հալէ, հալի-հալէ, Տիմպլիպիտօն լըսողին
Մարդիկ իրանց բաղչումը։ Ղուղն ու ականջն է տանում։

Ծալապատիկ ծառի տակ Մի՛ պատուելի քաղքըցուն
Մի՛ լօթիքն ին նըստօտել։ Աչքը ճակտին է թըռել
Տըկճուրնիրն ու խէլաղէք Գամաղին կըպել լիզուն,—
Իրանց բոլոր մօտ-արել։ Էլ չի ուզում նա լըռել։

Մինմին կենաց ին խմում Գաղքըցու գօզալ քալին
Սեռելոց ու կենդանեաց, Մարդիցը յիտ չի՛ մընում,—
Մինմինի բօղալն ին խրում Ձեռին առած մինծ կօվզին,
Շամփուրներով խորոված։ Զօռ է տալի կախէթուն։

(*) Գրած Ռ. Պատկանեանի

Դրամբացնում է դահիրան՝ Էնտի՝ Վանօն ձաղօին
Էրա փափուկ մատներով, «Էրթի քաղին» մրռում է։
Պար է գալի լեզգինկան
Աղունակի վուտներով։

Էս ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը.
Էսաի՝ Վիկօն Զուլօին թէ սիրում իս թամաշա՝
Գընա թաթախ զրռում է. Պիտիս ըլի քաղքումը.

20. (*)

Իմ սըրտիս աղ ես արել, Ինձ-հօ թոկով չ'ես կապել.
Զիզեարըս դաղ ես արել, Ամա դուռատաղ ես ա՛ել։
Ինձանից հեռացել ես,
Ինձ բէդամաղ ես արել։

Սիրելիէ՝ ինձ ատել ես,
Ատէլ ես նախատել ես,
Զիզեարըս կորատել ես,
Անաշաղաղ ես արել։

Դու ես իմ սիրահարը,
Գաշկա տանեմ քու ճարը,
Գըլխիս տըւել ես քարը,
Կիսակենդան ես արել։

Ինձ տեսնելիս տուր բարով
Խորհուրդդ ասա զրով,
Ինձ-հօ մորթել չ'ես սրով,
Ամոթ մատաղ ես արել։

Շատ մաղրկանցես խաբել,
Սիրոյդ ես եմ կրակվել.
Անսուր մատաղ ես արել։

(*) Գարծ Գուրջի օղլու աշըղին։

Եւ եմ ազիզ աղբերդ, Կերպարանքդդ տեսնելու
Ինձնից մի՛ կորել սերդդ, Ինձի արգելք ես արել։
Երկնից կամար ունքերդ,
Ինձ վերայ թաղ ես արել։

Բոյդդ շամշու սուրայի,
Խարաբայ սիրտս շահի,
Դու միշտ կամեցիր բարին, Ինձ դու տար մոտդդ քաշի,
Ուրախանալ մի՛ չարին, Հերիք է, եադ ես արել։
Էս քըրքրված ջիգեարին
Գահով արաղ ես արել։

Դու ես իմ սիրականը,
Մի՛ մաշկիջիվան ջանը,
Ի՞նչ է, աման, իմ մեղը Երեք տարուայ դուշմանը,
Հալուել է սրտիս եղը, Ես բարեկամ ես արել։
Երկու ծըծիդ մէջ տեղը
Բաղչա ու բաղ ես արել։

Կանչելիս մոտ չես գալի,
Արեան աչք եմ լալի։
Համ դուդի եահամ լաչին, Աչքերդ լոյս է տալի,
Ես մեռնում եմ քու պաչին, Ես շամ չըաղ ես արել։
Դոսթ ու դուշմանի միջին
Ամոթ ապարա ես արել։

Համ օրդակ ես՝ համ ղաղես
Դոստի մոտ փիսանդաղ ես։
Մուրլաթ արա՛ սիրահար Դու էնքան օյին բաղ ես,
Մի՛ չարչարիլ չարաչար։ Լաց ես ծիծաղ ես արել։
Ինձ քըցել ես քարէ քար։
Դըրուստ ասրաղ ես արել։

Մատներդ կակուղ մումա
Հալա էփած չի հումա,
Կարոտըդ քաշում եմ քու, Տեսողն հենց գիտում ա,
Չ'եմ կարենում ասել ահու, Ինձ էլ չըաղ ես արել։

Այսոր լանցի հանքդ։
Խիրտ տեղն է նշանքդ։
Անման կերպարանքդ
Նոր զար վարաղ ես արել։

Դարդերս ասեմ ումը։
Անուշ ձեռքերու խումը
Ծիծեռնակի բերդումը
Ասումն հաղ ես արել։

Ականջ դիր խօսքի լաւին
Գեղնից չի կտրուիլ դաւին
Բէջարայ Գուրջի—Օղլին
Մաղար ախմախ ես արել։

Մայիլ եմ դօշիդ խալին
Անուշ խիլք ու քեամալին։
Խըղճալի Գուրջի մալին
Կարկըտահար ես արել։

21.

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ՛։

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկելը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չ՚են ինձ համար։

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչերը,
Նոյա արցունք չ՚են ինձ համար։

Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չ՚են ինձ համար։

Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մեկտեղ սիրուէ տօն կատարելը,
Զատիկ օրուայ ուրախ. ասելը
«Քրիստոս յարեաւ» չէ՛ ինձ համար։

Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ աղջկայ տըխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուիլը
Բարեկամաց չէ՛ ինձ համար։

Բայց, ինձ համար կուզայ ժամը,
Կ'երթամ թըշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գընդակը
Անդ պատրաստած է ինձ համար։

22.

ՍՈՒԳ ԴԸՍՏԵՐ ՄԵԾԻ ԻՇԽԱՆԻ։ (*)

Ա Ղ Ա Խ Ի Ն Ն.

Ի՞նչ ես նըստել մունջ քո բանին,
Վե՛ր կաց, դուրս եկ, թէ ի՞նչ խօսին։
Խեղճի՛կ, էս էր քո արժանին,
Որ դու լինիս հին թաթարին.
Դու պէտք էիր լինել տիկին,
Տիկնաց տիկին մեծ իշխանին։
Եւ ոչ էապէս անօրինին
Զեռը կապած ընիս գերի

Դ Ո Ի Ս Տ Ր Ն.

Ի՞նչ ես ասում ճարդ կըտրած,
Չ'եմ հասկանում, ասա՛ դու բաց։

(*) Գործ հանդուցեալ Աւագեան բժշկի (Գօրբաղու համալսարանի ուսանող).

ԱՂԱԽԻՆՆ։

Էսօր ասողը թըռաւ կորաւ,
Լուս արևը խաւարեցաւ.
Վայ իմ գըլխիս, վայ քեզ Շուշան,
Գերի գնացիր թաթարըստան.
Այս հաւատքըդ պէտք է մառնաս
Մահմեթի կրօնքին դառնաս։

ԴՈՒՍՏՐՆ.

Լեզուդ սևնայ, բերանդ չորնայ,
Ի՞նչ համբաւ է, ասա՛ ի՞նչ կայ։

ԱՂԱԽԻՆՆ.

Մեծ իշխանըն քեզ տըւել է,
Թաթար խանին հետը տանէ։

ԴՈՒՍՏՐՆ.

ԱղՃի քոյերը, եկէք եկէք
Կորած գլխիս պառը լացէք.
Սեւ էր դառել օր ծընընդեան
Որ ես ծընայ թըշուառական։
Մէրիկ՝ վեր կաց գերեզմանէդ
Համբաւ լսէ աղՃըկանէդ։

Իմ սեւ բաղդը էնպէս արեց,
Թաթարըստան մենակ քըշեց.
Անգութ օրհաս հոդիս հանէ,
Գնային պատռէ, ինձ ներս տանէ։

ԱՂԱԽԻՆ.

Աղջիկ պարոն, էս ի՞նչ լաց է,
Աղի արտասունք դառըն կոծ է,
Մենք ամենքըս ցաւըդ տանենք,
Մեր գլուխը քեզ մատաղ կ'անենք,
Ուր որ երթաս հետըդ կըգանք,
Քեր աղ ու. հացն կըմոռանա՞նք.
Մենք վո՞նց պէտք է տեսնենք աչքով
Տեղէս մենակ գընաս լալով.
Աչքերդ սրբէ՛ և հանդարտուիր,
Հերիք եկաւ քեզ մի՛ ծեծուիր,

ՊԱՌԱԻՆ.

Վաթսուն տարի եմ ձեր դրան
Հերըդ պապերդ են իմ կըռան
Ծընած, սընած, իշխան եղած,
Էսպէս մին ցաւ ես չեմ տեսած։
Ականջըդ բաց էսէ խրատս,
Միտըդ ճըգէս էս պառաւս.

Ուր որ գընաս, ինչ տեղ լինիս,
Հաստատ մընաս լուս հաւատիս։
Զըմոռանաս Հայոց ազգիս,
Միշտ հանապազ նըրան օգնիս։
Ամենայն ժամ միտքըդ ձըգիս
Հայրենեացըդ պիտոյ ընիս.
Է՛հ, տէր ընդ քեզ, գընաս բարև,
Քրիստոս պահէ քո լոյս արև։

23.

—Ինչո՞ւ կու լաս դուն, դառնիկ։
«Խիստ ծեծ կերայ ես մարիկ»։

—

—Ո՞վ ծեծեց քեզ, դառնիկ։
«Մէկ ծեր կախարդ մը կընիկ»։

—

—Ընտո՞ր ծեծեց քեզ, դառնիկ։
«Դառին տակը իս, մարիկ»։

—

—Ինչո՞ւմ ծեծեց քեզ, զառնիկ։
«Մէկ պասթօնով մը, մարիկ»։

—

—Ո՞ր տեղդ զարկեց քեզ, զառնիկ։
«Ու�ըներուս, իմ մարիկ»։

—

—Ինչպէ՞ս լացիր դուն, զառնիկ։
«Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մարիկ»։

24.

ՀԱՅՈՑ ԳԻՆԻ։

Լքցրէք, եղբարք, ձեր բաժակները
Եւ քաջ պարպեցէք.
Այսպէս գինի բոլոր աշխարքումը
Դուք գըտնելու չէք։

Ո՛չ Թուրքի է այս և ո՛չ Մաճառի,
Ո՛չ Ֆրանսիայի։

թանգ ուրիշն ստար գինի խմի,—
Մերն է հրաշալի։

Շամպայն գինին—կառաց գինի է,
Այդ մեր գինին չէ՛.
Խմել, կոնծել թէ և կարելի է.
Բայց սիրելու չէ։

Խըրիմի գինին լաւ գովաց գինի է,
Բայց այս-էլ այն չէ՛,
Ճաշից յետո խմել կարելի է,
Բայց երգելու չէ՛։

Կախէթու գինին պատուական գինի է,
Թէ և Հայոց չէ՛.
Բայց, ախտա՜ս, օր Հեթանոսի է,
Նոյեան տընկաց չէ՛։

Երասխի մօտ՝—այնտեղ է մեր գինին,
Օրհնեա՛լ է Երասխ,
Երասխի մօտ ամենքն են գեղեցիկ,
Ամենքն են ուրախ,

Այդ գինին պարգևեց մեզ Աստուած
Ու դրախտից հանեց.
Երբ Հայ նոն աշխատանքից մաշուած
Նորան աղաչեց։

Նոն իմաստուն մարդ եղած պիտի լինի,
Որ այդպէս ճարտար
Նա ճըմլեց, քամեց, խմեց մեր գինին
Ու շինեց տակառ։

Ուրեմն, եղբարք, բաժակն լ.քցրած է՝,
Զամբեցէք անվախ,
Թէ լսենք որ՝ մէկը շատ տըխրած է՝
Նորան գինի կ'տանք։

25.

Խմել—երգեց՞ Անակրէոն,
Խմել—երգեց Հորաց.
Խմի՛ր, ուրեմն, ուսանող
Ըստ կարգին նախնեաց.

Խըմի՛ր վեց շիշ շաբաթը,
Կ'ասէ Հիպոկրատ.
Այս իմաստուն բըժշկէց
Ա՛ռ քեզ դու խըրատ։

կրկնէ։

Սոկրատէս փիլիսոփան
Երբ կինը գոռար,
Գինւոյ չասուած բաքոսին
Շուտ ուխտի կ'երթար։ Խմիր, և այլն։

Զուր խըմող Դիոգինէն՝
Տես թէ ի՞նչ արաւ.
Իր բընակուելու համար
Մի տակառ ընտրաւ։ Խմիր, և այլն։

Թէ նախանձ զարերումը
Գինին գովաց է,
Մի՞թէ մեր սուրբ գրքերումը
Այդ արգելաց է։ Խմիր, և այլն։

Խընդա այսօր Հայաստան,
Հայրենիք մեր սիրական,
Եկա՞յք՝ եղբարք՝ միաբան
Լիցուք. չՏեսանէ զոհաբան։

Բարձրացո՞ արդ, Արարատ,
Տեսուր թախիծ քոյդ գագաթ։
Եկա՛յք եղբարք, միաբան,
Լիցուք զՏեառնէ գոհաբան։

Փայլեցի խաչ Քրիստոսի
Ի լոյս ճակատ Հայ-ազգի։
Եկա՛յք, եղբարք, միաբան,
Լիցուք զՏեառնէ գոհաբան։

Մեծ են քո վառք, Սարգիս,
Մեծ են քո շնորք, տէր Փըրկիչ։
Եկա՛յք, եղբարք, միաբան,
Լիցուք զՏեառնէ գոհաբան։

Մեր կեանք, մեր վառք յաւիտեան։
Զոհեցի՛ք քեզ, Հայաստան։
Եկա՛յք, եղբարք, միաբան,
Լիցուք զՏեառնէ գոհաբան։

27

Ծիլ ծիլ ոսկիէ վարդի թերթերն,
Որպէս և ասեն նախնի ծերերն,
Ահա մերձեցաւ գարնան ջերերն,
Անուշ օրերն.

Գեղգեղեալ դոչէ,
Կանչէ, հառաչէ
Սիրոյն երամով,
Երամով իւրով։

Զալ չալ թիւերն՝ 'ի սէր տարածեալ,
Ողբով և սրգով չեղեւ շատացեալ,
Ի վերայ վարդին կարօտահարեալ.
Եւ սիրով վառեալ։

Ծալ ծալ թերթերուն վարդին թերաբաց
Հեղու զարտասուս նըման աղբերաց,
Ընջել և հանգչել նա ըստ օրինաց
Երբէք ոչ գիտաց։

Քիլ քիլ քայլով և ոտասաեղով՝
Շուրջ զվարդենեօք շրջի ողբալով,
Ի ծագիլ լուսոյն երգս յօրինելով,
Քաջ յարմարելով։

Զիլ ղիլ ձայներով, համեղ տաղերով
Գինին սառուցէք փայլուն պաղերով,
Վարդը քաղեցէք թոփ թոփ շողերով,
Գուտ պուտ ցօղերով։

28.

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ։ (*)

Ծիծեռնակ, ծիծեռնակ, Դու ապատմէ՛ թէ ինչպէս
Դու գարնան սիրուն թռչնակ, Ատ անտէր ու խէղճ եմ եմ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա, Միշտ լալով, ողբալով
Թռչում ես այդպէս արագ։ Կեանքս մաշուել, եղել կէս։

Ա՛խ, թռչիր, ծիծեռնակ, Ինձ համար ցերեկը
Ցընած տեղս Աշտարակ։ Մութ է շրջում արեգը,
Անդ շինիր քո բունը Գիշերը թաց աչքիս
Հայրենի կլտուրի տակ։ Գունը մօտ չի գալիս։

(*) Այս երգի հեղինակի մասին զանազան կարծիքներ կան, ոմանք կարծումեն թէ հանգուցեալ երջանկոյ յիշատակ Ներսէս Ե. էր սորա հեղինակը իւր Բեսարաբիայ եղած ժամանակը. միւսները այս երգը ընծայում են Դօրբաղու ուսանող հանդուցեալ Ակարեանցին, որ աւելի հաւանոտի է։ Երրորդները ասում են թէ Պ. Դօղոխեանցի հէղինակութիւնն է։ և այլն.

Անդ հեռու ալևոր
Հայր ունիմ սրդաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասումէ օրէ օր։

Ասիր, որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկած։

Երբ տեսնես դու նորա՝
Ինձնից շատ բարև արա,
Ասա, թող նրատի լայ
Իւր անբաղդ որդու վերայ։

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ,
Դէպ 'ի Հայոց երկիրը,
Ծնած տեղս—Աշտարակ։

29.

ԿՈՒԱՄԲԱՄԲՈՒԼԻ։

Կուամբամբուլին էս էն օղին է։
Որ մեզի քաջ ծանօթ է,
Որոյ համը չի տեսնելը
Ուսանողին ամօթ է.
Բայց հանապազ, իմ սիրելի,
Մենք կոնծում ենք Կուամբամբուլի,
Կուամբամ բիմ բամ բուլի, Կուամբամբուլի։

Հայրս անդադար ինձ գլխում է՝
«Որդի-Ջան՝ շուտ աւարտէ.
Ժամանակդ արագ անցնում է,
Տես գրերդ լաւ սերտէ.»
Բայց նորա պարոն որդին
կոնծում է կռամբամբուլին։

Թէ դարդն ու հոգսը ինձ նեղում է,
Թէ իմ քէֆը տեղը չէ,
Թէ աղջիկը ինձ խաբում է,
Ու էլ հաւատարիմ չէ.
Կ'ասեմ՝ «Աղջիկ, իմ նազելի,
Քու տեղ կ'սիրեմ կռամբամբուլի»։

Թէ լերդս ու թոքըս իմ մաշուել է,
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,
Թէ որ խմելն ու քէֆ անելը
Բըժիշկն ինձ արգելում է,
Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլի,
Ես կ'կոնծեմ կռամբամբուլի.

Երբ մայրս ինձ մի հարս ճարել է,
Ասում է որ՝ պըսակուիմ,
Եւ պարտքն ու կարգն ինձ ստիպել է,
Որ ես ճաշ ու քէֆ սարքեմ.

Ես ճաշի տեղ, իմ սիրելի,
Կ'առնում առատ Կոտմբամբուլի:

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,
Մահս-էլ առաջիս տեսնում,
Օղին կ'ածեմ բաժակիս մէջը,
Հոգեհանիս-էլ կ'ասեմ.
«Վերջին անգամ, իմ պատուելի,
Եկ տուաքացնենք Կոտմբամբուլի,

30

ԿԸՌՈՒՆԿ:

Կըռունկ ուսաղ կու գաս, ծառայ եմ ձայնիդ,
Կըռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս.
Մի վազեր երամիդ՝ շուտով կը հասնիս,
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս

Թոռներ եմ ու եկեր իմ մլքերս ու այգիս,
Քանի որ ամիս կ'անեմ, կու քաղի հոգիս.
Կըռունկ՝ պահ մի կացիր, ձէնիկդ 'ի հոգիս,
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունիս:

Քեզ խաբար հարցնողին չես տանիր դալաբ,
Զէնիկդ անուշ կու գայ քան զՋրի դօլաբ.
Կըռունկ՝ Բաղդադ ի՞նչնուս, կամ թէ 'ի Հալաբ.
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Սրտերնիս կամեցաւ, եկանք գընացանք,
Այս սուտ ատընորիս դարդերն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք,
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Ատընորիս բաներն կամաց կամաց է,
Մինթէ Աստուած ըսէ, գըռնակն բացցէ.
Ղարիբին սիրտն է սուգ, աչերն 'ի լաց է,
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Աստուած, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ.
Ղարիբին սիրտն է խոց, ջիգերն է վէրէմ.
Խըմած ջուրն է լեղի, ու հացը հարամ.
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Ո՛չ գլուր օրն գիտեմ, ո՛չ գկիրակին,
Ցարկած է գիս շամփուրն, բըռնած կրակին.
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ,
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞ս:

Բաղդադու կու դաս, կ'երթաս 'ի սէհրաթ
Թղթիկ մի գրեմ, տամ քեզ ամանաթ,

Ասառած թող վկայ լինի քո վրաղ,
Տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց։

Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս մընացի,
Օրիկ մի օրեր զաչերս չի բացի
Սիրելիք՝ ձեզանէն կարօտ մընացի,
Կըռունկ՝ մեր աշխարհէն խաբրիկ մի չունի՞։

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէդբիր,
Երամներ ես ժողվել հազարներ ու բիւր;
Ինձ պատասխան չի տուիր, ելար գնացիր,
Կըռունկ՝ մեր աշխարհէն գնա հեռացիր։

31·(*)

Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես ա՛խ,
Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ,
Ա՛խ, սիրտս խորովում, ցաւիս չկայ վերջ։

(*) Գործ Գօրգաղաս ուսանող հանգուցեալ Գէորգայ Միրիմանեանց Թիֆլիզեցոյ։

Երբ կարմիր գինին բաժակումս ածած
Սեղանիս վերայ առաջս է դրած,
Աչքս ակամայ վերան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում։

Տեսնում՝ եմ ես, ախ միտքս է մոլորվում,
Դառն արտասունքով աչքս պղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհն մրթնեց,
Արևն-էլ խաւրեց, էնդուր որ տխրեց։

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչքերն էլ ի՞րբ կբռնեմ.
Էն սև սև աչքերն՝ սև ունքով պատած.
Կարծես՝ երկնային զալամով քաշած.

Էն սև սև աչքերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին դժոխքից հանեց,
Ես-էլ կենդանի տեղս եմ մեռած,
Առանց կըրակի էրուած, խորոված։

Էլ ի՞րբ կբռնեմ ես ձեզ մեն-դալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն-էլ է դեղնում,
Երե-որ ձեր կարմիր թքշերը տեսնում։

Բլբլուն-էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թրռչում է. թրռչում, ամպերում կորչում,

Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում։

Հայոց աղջիկներ ի՞նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բէղամաղ կ՚անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես։

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
Հաւատն-էլ օտար, տար և լեզուն՝
Աղջիկն-էլ օտար ու ձեզ չի նըման,
Հայոց աղջիկներ՝ դուք էք աննըման։

Ձեր սէրն է միայն սըրտումըս պահած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրն միայն՝ էս կեանքըս մաշուած
Օտարութեան մէջ դեռ կըպահպանի։

32

ԵՐԳ Ի ԴԷՄՍ ԲԱԶԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ։ (*)

Հայրենասէր Արամեանք,
Զի՞ կայք 'ի քուն ընկղմեալ,
Բացէ՛ք զաչս ձեր հոգեկան,
Տեսէ՛ք զօր ձեր ժամանակայ։

Ո՞ւր են փառք, ձիր ձեր նախնեաց,
Ո՞ւր են պատիւ վեհ արանց,
Որք զաշխարհս Հայաստանեայց
Լցին պարուք զիւցազանց։

Յառաջ մատէք լինձ լսել,
Շառաւիղք քաջին Հայկայ,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէր գործս Վարդանայ,

Որ զգլուխ իւր կենօք չափ
Եդ 'ի փրկանս իւր ազգի,
Եւ կընքեալ զայն իւր արեամբ՝
Եղև փրկիչ Հայրենի։

---

* Այս երգը չէ վերջացրած։

33

ԻՄ ԵՐԳԸ։

Հեռացել եմ իմ մայրենի աշխարից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բըսած ծաղկի նման դաշտումը։
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած դարուն, ամառ դարձնում են,
Միայն իմ խեղճ կանքը չ՝ունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կըրկնըւում է միշտ այսօր։
Ասպարիզս նեղ է ճամբան ու փշոտ,
Խեղճութիւնըս համարում են ինձ ամօթ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չ՝ունի,
,,Դա, ասում են, ֆր կեանքումը, դարդ չ՝ունի։"
— Ես դարդ ունիմ, դարդըս մեծ է ու պէսպէս,
Բայց չ՝են տեսնում ձեր աչքերը կարճատես, —
Երբ ես մըտայ անհիւրընկալ այս աշխարհ.
Քանի բոպէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ։
Հա՛, ասացի, դարձել է իմ անիւը,
Լրացել է իմ վատ բաղդի չար թիւը։
Ցանկարծ՝ փը չեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին,

(*) Գործ Ռ. Պատկանեան։

Այսպէս ջրցուց իմ նաղելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը։
Ա՛խ, մտեցէ՛ր, օրհասական օր մահուան,
Բո՛ր քու հետը սեւ հող ու նեղ գերեզման,
Թո՛ղ սառ լինի իմ նոր տանը յատակը.
Ծանրը քարէ վրէս ծածկած վերմակը։
Բայց, ա՛խ, երբ՝որ կ՝անցնի ամիս ու տարի,
Երմամռոտի գերեզմանք այն քարի,
Հետքը անգամ չի մընալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ—կը կորչին.
Բայց կ՝ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար, ամուր անկործան,
Ես երգեցի երգ ողորմն ու անոյշ.
Իմ քընարի ձայնն էր մեղմիկ ու քընքոյշ,
Մի՞թէ այնքան անգութ կ՝լինի Նոտա գետ,
Որ անուշերս անգամ կ՝անէ նա անհետ։

34.

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆԸ։ (*)

Մայր-Արաքսի ափերով
Քայլամոլը գընում եմ։

(*) Գրած Ռ. Պատկանեանց։

Հին հին դարուց յիշատակ
Անեաց մէջը պըտրուտ եմ։
Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջըրով եկերքին
Դարիւ դարիւ խըփելով
Փախչում էին լալագին։

«—Արա՛ք՝ ինչո՞ւ ձըկանց հետ
Խաղ չե՞ս բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած՝
Սըգաւոր ես ինձ նըման.

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես —
Այդ հարազատ ափերից.

Մի՛ պըղտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է, —
Շուտ կըհասնիս դէպ 'ի ծով։

Վարդի թըփեր թող բըծնին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ։

Մըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու չըրին
Ձըկուն ոտքն ու տերև
Թող թաց անեն տաք օրին։

Ախերիդ մօտ երգելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քու վրձիտ
Զուրը մըտնին միշտ արձակ։—

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով
Էապէս խօսեց յատակից.

—«Խիզախ, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր
Վըրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր։

,,Սիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտից գըլուխ պըճնուի
Իր զարդերով թանկագին։

«Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,—

Շատերն՝ ինձ են ատելի,
Շատերին՝ ես օտար եմ։

,,Կար ժամանակ, որ ես-էլ
Շը.քեղաղարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչրանքով
Փախչում էի ափերէս.

,,Յատակըս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ոլորուն.
Լուսաբերը մինչև այդ
Զըրխս միջին էր լողում։

,,Ինչըս մընաց այն օրից,
Ո՞ր Զըրամօտ գեղերըս,
Ո՞ըը իմ շէն .քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս։

,,Տուրքը Զրբի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընուռնդ
Պարգևում է լիառատ.

,,Բայց ես այն սուրբ Զրերով,
Սուրբ-Ակօրի աղբիւրին
Պիտի ցողեմ արտօրայ.ք
Իմ ատելի օտարին։

,,Կամ կենաստու իմ ջրով,
Ափերիս մօտ կրկրզած՝
Իր նամաքը կատարէ
Թուրք կամ Պարսիկը հոտած։

,,Մինչ իմ որդիք (ո՞վ գիտէ)
Ծարաւ, նոխի, անտերուչ
Օտար աշխար յածուտ են
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . .։

,,Հեռու հեռու քըշեցին
Բընիկ ազգը իմ Հայկեան,
Որա տեղը ինձ տուին
Ազգ անկըրօն, մոլեկան.

,,Դոյա՞ համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը.
Եւ կամ՝ դոյա՞ հրապուրեմ
Ճըպռոտ, պրլշած աչերը։

,,Քանի որ իմ զաւակունք.
Այսպէս կումընան պանդուխտ՝
Ինձ միշտ սրդուր կը տենդէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ.»—

Էլ չի խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,

Օրհնակ օրհնակ օձիր պէս
Ամաչ սողաց մոլեգին։

35

ՏԱՂ ՀԱՏԿԻ։

Մարտըն կուգայր ծաղկըներով,
Յերկնից հաւերըն կարդալով,
Հրեշտակապետ փառըս տալով,
Յորժամ Հայոց Զատիկըն գայր։

Բարկ արեգակըն ծագեցաւ,
Պատիկ ձըներն հալեցաւ,
Գառն ու մաքին ընծայեցաւ,
Յորժամ Հայոց Զատիկըն գայր։

Ամպ ու երկինքը խիստ գոռաց,
Ողորմութիւն ցոյն ցողաց,
Ծով ու գետերըն խիստ ծըփաց,
Յորժամ Հայոց Զատիկըն գայր,

Խղճերակունքն յորդորին,
Ծառ ու ձրդերն զարդարին,
Խոտ անասուքն ճաշակեն,
Յորժամ Հայոց Զատիկն գայ։

Մարդասէս դատ մեղուն
Ժողովէ ծաղիկն լեռներուն,
Ո՛չ վախենայ 'ի մեռնելուն,
Յորժամ Հայոց Զատիկն գայ։

Բուլբուլն զումրին առաւօտուն
Եկեր դարձեր վարդին մօտուն,
Գանդատ կ'ընէր նա 'ի հողմոյն,
Յորժամ Հայոց Զատիկն գայ։

36

ԵՐԿՈՒ ՔՈՅՐ· (*)

Մեզմէց շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով դեռ արի դրլխով ալեւոր·

(*) Գործ Ռ. Պատկանեանի

Մեծ ծով էր պատել նորա աշխարը,
Ոսկի աստցին գիտուն այն դարը։
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,—
Մինը խիստ սրդեղ, միւսը գեղեցիկ։
Մի օր սրդեղը ասաց միւսին
,,Երթանք ծովի ափ քուրիկ միասին։՝
Սիրունը գընաց առաջից սրբատ։
Տրդեղը ետնից ոչ պահած սրբատ,
Հապիւ թէ ծովի ափին էր հասած՝
Իր սիրուն քրոջ գլխից նա ցած։
Կանչից կիսամեռ սիրունը ջրից՝
—,,Քուրիկ իմ, քուրիկ՝ փրկէ ինձ մահից։
Ես ունեմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք։՝—
,,Էն առանց քեզ-էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։՝
—,,Քուրիկ՝ թէ այդ-էլ քեզ չէ բաւական,
Կրտամ քեզ ոսկի պրսակ պատուական։՝—
,,Էն առանց քեզ-էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։՝
—,,Քուրիկ՝ մի՛ թողնիլ դու ինձ անտերուչ,
Քեզ սիրուն փնտուս կրտամ անտրտունջ։՝—
Տրդեղն սիրտը դարձել էր ժեռ քար,
Քրոջ խընդիրքը թողեց անիատար։

Զբկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Բըռնեց մարմինը սիրուն աղջկան.
Զըբխցը հանեց, դըրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրեն՝ ու շատ խօտ։
Մի աշուղ անցաւ տեսաւ աղջըկան,
Լացեց ու առաւ դըրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անդին գիւղը.
Զորացուց նորա մարմնոյ դիպի հիւթը,
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկորից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից։
Երբ-որ ամեն բան պատրաստեց կարդին՝
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մըտաւ դահլիճ շըքեղ զարդարած,
Տեսաւ արքեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խըփեց.
Հիւրերի առաջ քաղցրաձան երգեց.
«Հընչէ՛, իմ տաւիղ, հընչէ՛ համարձակ,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ պըտակ.
«Ասէ՛ իմ ծընող, լըսէ՛ սիրական,
«Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան
«Ասէ՛ ժողովուրդ, լըսէ՛ անխըռով.
«Հարազատ քոյրըս գըլըրեց ինձ ծով։»
Միւս օր դահլիճք խարոյկ շինեցին,
Սահապարտ քըրոջ մէջը գըրեցին.
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց՝
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց։»

37.

ԱՐԱՄ — ԵՐԳ։

Մեր քաջ Հայոց զօրութիւն, } երկկոյս։
Վեր կացէք, ասաց Արամ.
Առաջեաւ բացէք նիշան՝
Գնանք Հայ լեզուն տարածենք՝
Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

Նիւքար զատրուկն Ասորին
Բառբաւ կոչէ առաջին,
Գլուխն յաշտարակ մեխեցէք,
Որ յերկնից տրուի Հայերէն։ Ո՛հ, և այլն։

Յորդան տուք, զօրք ծն յորդան
Դէպ 'ի կողմն Արևմըտեան,
Պայծիս Քաղեայ Տիտան,
Դէք զ'ի տապատ 'ի դամբան Ո՛հ, և այլն։

Յորդան տուք ծն, զօրք յորդան,
Տեարք լայնալեծ աղեղան,
Քընքուշախոս ամբոխին
Տալ ըզլեզու Հայկական։ Ո՛հ, և այլն։

Ո՞վ չլգիտէ Հայերէն,
Ո՛չ մանաւէ նա զօրէն.
Որ բանիւ Հայոց արար
Այս մեծ աշխարհ մեզ համար։ Ո՛հ և այլն։

Ի ծովէ մինչև 'ի ծով
Թող խօսին Հայ բառերով.
Ներհակողին նիզակով
Ցուցէք ո՛հ, ասաց Արամ,
Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

38. (*)

Ա Ն Ո Ի Ր Զ Ք։

Յամաւելոյն Ապրիլի զպատուհանս բացի,
Զձիւնաթաղ գաշտերայս ծաղկազարդ տեսի։

Արտասուք եռանդունք զայս իմ այրեցին,
Զիմ անդարձ գերութիւն յուշ իմ մուտ ածին։

Ակզուապէս դառնացան վերք վըհատ հոգւոյս.
Թըմրեցան զդայարանքս հատան կելք ընչոյս։

(*) Գործ հանգուցեալ Ամդրարեանի։

Սփոփս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,
Շատ անէծս թափեցի 'ի ծննդեանս վատ օր։

Մաշեցայ, թոշնեցայ, մլտի խոր 'ի քուն,
Զչար կսկիծ հէք գերեզման արկի 'ի ծով անհուն։

Դրշխոյն մեծ անմահից էջ ինձ յայց տեսլեամբ,
Որպէս թէ 'ի փոսոյ զիս երկոյզ ձեռամբ։

Աներկիւղ մօտ մատեայ 'ի համբոյր ոտին
Գերբնապէս սքանչելեօք զիս ազատողին։

Բամբ ձայնեղ թըռչնակաց ճոխ դայլայլեցին,
Կենաւծին Տիրամօրն փառս վերերգեցին։

Երանի՜ ասացէք, կարմրացայտ վարդիս,
Քաջալերս տուք նըմա 'ի գով պաշտպանիս։

Ս�՜ալ իմ նեղաւորս կարճամիտ լալոյս,
Զիաւրդ զիս կարծեցի կորուսեալ անյոյս։

Նախատինք իմ նեղչաց նոքք եղեն ինքեանց,
Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց։

Յաւագնեալք՝ օրհնեցէք զանուն Տեառն յաւէտ,
Դէք զյոյս ձեր յօգնութիւն Խաչին փրկաւէտ։

39 (*)

ՍՈՒԳ ԴՍՏԵՐ ՅԵՓԹԱՅԵԱՅ։

Յառաւօտ կենաց կուսանէս,
Յարշալոյս աւուրց անմեղէս,
Խորշակ մահուան տարածի,
Ա՛խ. լոյս աչացս պակասի։

Ա՛յ ծանօթ լերինք և հովիտք,
Ա՛յ պայծառ դաշտք ծաղկափթթիթք.
Ահա՛ 'ի ձէնջ հրաժարիմ,
Փութով եղայց 'ի շիրիմ։

Լայէք զիս, ո՛վ անտառք. բլուրք,
Լայէք հարք, մարք, եղբարք և քորք,
Զիս փոյթ զենցէ սուր ուխտին,
Յօդուածքս այժմէն տարտամին։

Արիւն իմ է զին փրկութեան,
Դիցամոլ տանն Իսրայէլեան
Մեղապարտքն ազատ մընան,
Անմեղ կեանք իմ չըքանան։

(*) Գործ հանգուցեալ Ալամդարեանի։

Մայր իմ, ախ, դու մի՛ շատ ցաւիր,
Հօրս ուխտին բնաւ մի՛ ներհակիր.
Աստուած բարձրեալն զքոյս քո դիր
Քեզ զգաթդս իմ, մի՛ տըխրիր։

Դուք զըսուրբք տոհմին Յակովբեան,
Շուրջ զինև կացէք միաբան.
Երգեցէք զերգս հարանութեան,
Միշտ ասնեցէք զիմ վախճան։

Աստուած մեծ՝ փառք Իսրայէլի,
Ընկալ զիս իբր զհոտ կընդրկի,
Իբրև զգոհն Աբէլի,
Իբրև զորդին Սարրայի,

Բաբունեաց վըճիռ համաձայն
Ո՛չ կարաց մահուս ապալ խափան.
Լեր դու, Տէր իմ, օգնական,
Դու հեշտ արա՛ զիմ վախճան։

Եղկելոյս ծընողք ցաւալի
Մընացին առանց զաւակի՝.
Տէր, ո՛ւր, նոցա սիրտ արի.
Մեղմեա՛ զմորմոքք դառն վըշտի։

Անանիկ երամք հրեշտակաց
Առ երկնիւք կան թեւատարած,

Զիս հրաւիրեն յՍղին բաց,
Զիս կոչեն հարսն Հօր փառաց։

Նըկարէն քօղն իմ հարսնութեան
Փոխարկի 'ի պատան թաղման.
Իմ պըճնազարդ հարսնարան
Եղև այս խոր գերեզման։

Ցուցէք ինձ զիմ մահու դորձի,
Զսուրբ զէն զոհիս արժանի.
Արդ՝ ողջ լերուք, սիրելիք,
Օրհնեալ է Տէր, ոպիղծ են դիք։

40 (*)

Ցերկու ձեռին երկու մամ՝
Ինձ ընդ առաջ ել 'ի տուն,
Մի հարցանէ —ոմ էր նա,
Հրեշտակ, թէ կոյս լուսազեղ։

Ամօթն ըզնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար.

(*) Հանդուցեալ Ս.Լամդարեանի դորձ.

Այն ինչ օր էր և զինչ ժամ,
Յորմէ տեսի ես կեանք նոր։
Խաճըրադ յայնմիկ տան,
Ի մարդաշատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտին կայր ոմն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ
Ինձ պատահեալ առ դրամբ տան,
Զոգիս գրաւեաց յիւր 'ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

Մարգարտավայել մարմինն էր,
Հասակն էր յոյժ վայելուչ։
Զոտիւքն իւր վարսք քարշ գային,
Ի գոյն քըրքմոյ փայլէին։

Դիմաց շըքեղ երևոյթ,
Յօնից աչաց, այտից գեղ,
Շրթանց լեզուին համանոյշ
Խոստանային ինձ կեանք նոր։

Ա՛խ ասացի, թըմրեցայ
Սիրոս սկսաւ դողդողալ,
Զաշխարհս համայն մոռացայ
Ի գեղ կուսին ափշեցեալ։

Բամք կոչելոցն յայն հանդէս
Ընդ իմ մեծ բաղդ մախային,
Զի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանձն իմ ձայնէին։

Եթէ զաշխարհ լի զանձիւք
Ինձ ոք առեալ ՝ի պարգև՝
Ո՞վ տեսանէր այնքան բախտ,
Որքան ՝ի գալս առ կուսին։

Արդեօք՝ գուցէ՞ յաշխարհի
Սիրոյ նման ինչ հրաշք,
Սէր ՝ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուացս է ձիր նոր։

Նանրախորհուրդ ազգ մարդկան՝
Շատ մի՛ սիրեր դու զաշխարհ,
Նա թշնամի է անդութ,
Զար քան զքարբ մահաթոյն։

Ցանցիւ սիրոյ զքեզ կարթէ,
Ի հաղբ անել ըմբռնէ.
Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կոլոպտէ։

41

Յորէս էկաւ մէկ մէկ ուտի, վա՜յ վա՜յ,
Աղուէսն էկաւ լանչիկ լանչիկ, վա՜յ վա՜յ,
Ոտեր ունէր կարճիկ կարճիկ վա՜յ վա՜յ,
Սիրտը ուզից հաւի քարճիկ, վա՜յ վա՜յ։

Վա՜յ իմ չալիք- մալիք, չալմալալիք,
Զալպտորիկ, չալմատլալիկ, տռշտահտա,
Տմպլաճակատ, խաշխատպիկ, տռզիկ ճուտեր, վա՜յ վա՜յ։

Աղուէսն պատէկից աղբի տակին, վա՜յ վա՜յ
Աչքերը ձգից չաղ հաւ ճաղին, վա՜յ վա՜յ
Ներսով կըտամ աչքի տակին, վա՜յ վա՜յ
Որ մօտ չի գայ նա մեր բակին, վա՜յ վա՜յ։

Ես մի բատուկ տանը ունեմ, վա՜յ վա՜յ
Ելեմ երթամ ճաղերս հանեմ, վա՜յ վա՜յ
Ես էն աղուէսն կու ապտանեմ, վա՜յ վա՜յ։

Յորէս եկաւ Զաւաթ—խանը, վա՜յ վա՜յ,
Ո՞վ տրվայրաւ ամեն բանը, վա՜յ վա՜յ.
Աղջիկ՝ վեր կաց, ջուր տուր հորթին, վա՜յ վա՜յ,
Մեռնի, կատուատիրոջ որդին, վա՜յ վա՜յ։

Ա՜յ տղա՝ անուանդ է Աւագ, վա՜յ վա՜յ
Քեզ կ'ուտացնեմ մեղը ու կարագ, վա՜յ վա՜յ,

Համ տիրացու համ տարկաւոր, վնաս վնաս,
Ոսկր ունես հաւաք-մաւաք, վնաս վնաս։

42 (*)

Ցորեան եղև գարուն՝ արև ծաղեցաւ,
Հարաւ հողմն հընչեաց, սառն հալեցաւ,
Երկիր կանանչացաւ, ծառն ծաղկեցաւ,
Խմենք, եղբարք, գինի՝ մեզ անուշ լինի։

Ո՞վ եղբարք, նստեալ էք ծաղկեալ ծառի տակ,
Զեռներիդ է գինին կարմիր ու սպիտակ.
Ծառի մէջ անկանի ծաղիկ ըսպիտակ. Խմենք և այլն։

Վաղուն ոչ գիտէք՝ թէ ղինչ ծընանի,
Մարդոյս կեանքն վարդի ծաղկի նըմանի.
Որ այսօր բացեալ է՝ վաղուն անցանի. Խմենք, և այլն։

Նոր գարուն, նոր արև, ծաղիկ շնորհազարթ,
Այսուհետև բացուի մանուշակ ու վարդ,
Զայն բիւլբիւլին, սատրակին լսէ ամեն մարդ. Խմենք
և այլն։

Այլ և խաղաղութեամբ խըմելն է հալալ
Ո՛չ հարբելը գոռալ և ո՛չ բարկանալ

(*) գրած աշխդ Ադամ Հախաշուլի

Ուրախութեամբ խրմել սիրով զուարճանալ Խմենք
և այլն։

Գնա՛, լայց քո մեղքերն, Նախաշավ Ադամ։
Աշխարքս անցաւոր է, չէ՛ մընացական։
Դուք կերեցէ՛ք, խմեցէ՛ք եղբարք, սիրական,
Եւ օրհնեցէ՛ք զԱստուած այժմ և յաւիտեան։

43

ՀԱՐԲԱԾ ՄԱՐԴՈՒ ԵՐԳ

Ուղիղ գնեստունից ես տուն եմ գնում,
Փողոց, ա՛յ փողոց, էդ ինչ եմ տեսնում,
Աչ գընամ, թէ ձախ՝ ծուռն են երկուսն-էլ,
Փողոց՝ տեսնում եմ՝ դու-էլ ես Հարբել։

Լուսին-ջան՝ ռէխբդ ինչի՞ է ծըռած,
Մէկ աչքըդ կապուել միւսը կէս-բաց։
Դու էլ ես կոնծել, ա՛յ դու անամօթ,
Ամաչի՛ր ինձնից, վաղուցուայ ծանօթ։

Բահ էստեղ էստեղ — տե՛ս լապտերներն-էլ

Չ'են կարող ուղիղ ոտքի վրա կանգնել.
Մէկ պարզ ես վառվում, մէկ՝ սաստիկ խաւար,
Կամ թէ՝ պատից պատ կըպչում անդադար։
Աղբէր՝ էս գիշեր ամենքն են հարբել.
Ի՞նչ բան է մենակ մենակ ծոմ պահել։
Չէ՛, էդ կըլինի խստակ գըժութիւն,
Ուրեմն նորից-նոր դառնամ գնեցուն։

44

ՈՒՍԱՆՈՂԱՑ ԵՐԳ

Ուսանողաց կեանքից գեղեցիկ կեանք չի կայ,
Ինչպէս Բաքոս ու Գամբրին սանեղծից.
Միշտ պանդոկներ վազել և իւր փողը մխսել
Մի պատուական ու ազնիւ գործ է.
Փող չ'կայ դրպանումը, պարտք կայ պանդոկումը,
Միշտ ուրախ է մեր քաղցրիկ կեանքը.
Թէ փողերը պակսի՝ նոր պարտքերով կ'ապրի
Մեր խաչամտերիմ ուսանողը։
Սիրով-էլ է պատած ուսանողաց կեանքը,
Մեզ պահում է Հայոց սատղիկը.

Մեզ սիրող աղջիկներ ու պաչեր տուողներ
Միշտ շատ ու շատ էին այն տեղը.
Իսկ վերին ծարաւով, պղատոնական սիրով
Մեր սէրը միշտ ալնիւ կու մընայ.
Բայց իւր վառ սրտումը ուրիշ կրակ վառումէ
Մեր խաչամտերիմ ուսանողը:

Հայրն ասում է՝ ծեծկվել, պանդոկները թրև-գալ.
ՔընտուԹեան մէջ քեզ օգուտ չի տալ.
Բայց նա մառանում է, Թէ փղշատցի է,
Թէ ամեն բան ունի ժամանակ,,
Այս է տխրուԹիւնը, որ շուտ քընտուԹիւնը
Վեց վեց ամսակիցը յետ կու գայ.
Ուրիշ բան չէր ուզել աշխարհումը ս լինել
Մեր խաչամտերիմ ուսանողը:

46

ԵՐԳ, ՍԷՐ ԵՒ ԳԻՆԻ.

Ուրախ լինիք, եղբարք քանի-որ կըտրիճ ենք,
Թէ չէ՝ շուտով կ'անցնի մեր մանկուԹիւնը,

Կու գայ մեզ կու կոխէ ծերութեան ցաւը,
Ապա ի՞նչ պիտ՝ անենք մենք ան ատենը:

Արտոքանք երգելու՝ քանի-որ շունչ ունինք,
Թէ չէ՝ գարնան ծաղկի պէս շուտ կու թառամինք
Ախտս է, ախտս է մեր ոյժն ու սիրտը,
Ցաւ կ'ընէ մեր սրտին անցած օրերը:

Ե՛կ սիրենք, եկ սիրենք, եղբարք, մեկզմեկու,
Մեր մէջից դէն՝ ձըգենք չար բամբասանքը,
Բաց սիրտով, պարզ աչքով մեկ մեկու նայինք,
Թո՛ղ սիրով անց-կացնենք մեր մանուկ կեանքը:

Եղբարք՝ խմենք դինին Հայ ազգի կենացը,
Որ ամուր պահպանէ իւր սուրբ հաւատը,
Քաջ սիրտով, վառ սիրով սիրէ իւր հաւատը,
Ուրեմն գարդըկենք մենք մեր գաւառը:

47

ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականս վերջին գարդ,

Եա քիզ հանեց իւր կրծից, (կրկնէ։
ինձ պարգևեց, վերջին վարդ։ (

Մանկութեան ոսկի ժամերն
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ (կրկնէ։
Դու ես միայն, վերջին վարդ։ (

Գարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում,
Միշտ ապատում եմ քու տեսքին (կրկնէ։
Դուն ամառուայ, վերջին վարդ։ (

Երջանիկ կեանքիս օրերը
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք (կրկնէ։
Միաքըս բերիր, վերջին վարդ։ (

Շատ չի տևիլ կըբացուի
Առաջիս սև գերեզման,
Էս աշխարից միայն քիզ (կրկնէ։
Հետս կառնում, վերջին վարդ։ (

48

Փութա՛ առ մեզ, նախշուն կաքաւ,
Սարերն ամեն կանանչացաւ,
Զարդ գգեցեալ պայծառացաւ։

Յայդ լեռներէն 'ի վայր փութաս
Յաւուրս գարնան պարեալ ցընծաս,
Նախշուն ճաղերով շուրջ կու գաս,
Արագ արագ ոստոստելով,
Ծաղկանց վերայ թաւալելով,
Վասն ոյր թըռչիս.
Ընդէ՞ր վախչիս
Կամ զի թաղչիս,
Կողկոջալով՝ ձայն արձակես
Ճաղկղա՛- շաղկղա՛,
Կաղկղա՛- կաղկղա՛
Միշտ հարաչիս ու կարկաչիս։

Ոսկիափայլ փետուր քոյին
Զանազան գունով շողշողին
Որպէս զլոյս բոլորովին, Յայդ և այլն։

Փառօք ճեմիս որպէս իշխան,
Ներինքըն քեզ յարկ սեպհական.

Դաշտերն ամեն համանգամայն։ Յայդ,
և այլն։

Ծիծաղաձայն քաղցրիկ թըռչուն,
Զքնաղատիպ և յոյժ սիրուն՝
Ի մէջ ծաղկանց ննջես 'ի քուն։ Յայդ, և այլն։

Գև ծոխանան ամեն լերինք
Եւ համօրէն մարգագետինք,
Զքեզ գովեն ապդ և ագինք։ Յայդ և այլն։

Արդ՝ բարձրացո՛ զձայն քո ընդ իս,
Եւ փարատեա՛ ըզսուգ սրտիս
Հայցմամբ քոյոյ երգաբանիս։ Յայդ և այլն։

Կարկաչաձայն այդ ձայն քո սուրբ
Տոչորէ զիս սիրոյ քոյ հուրբ,
Զեռ զովանալ արտասուաց ջուրբ։ Յայդ,
և այլն։

Այդ լեռներուն հուպ առընթեր
Դէպ զառ 'ի վայր և զառ 'ի վեր
Թերաբաց թեւօք ճեմ առեր։ Յայդ, և այլն։

49

ՀԱՅԿ ԵՐԳ.

Օ՛Հ եկայք արի Հայեր,
Ցիշնայուք զնախնիս մեր,
Միաբան ելցուք 'ի վեր—
Ցիշելով զարին Հայկ։

Հայը մեր Հայկ էր դիւցազուն,
Եղեցուք նըմին հանգոյն,
Ազգ մեր փոքրիկ, այլ քաջազուն
Է մեր քաջ ազգս Հայկ։

Հայկ երեք հարիւր հոգւով
Միասիրտ որդւով, թոռնով
Զոկեց մեզ Հայ անունով.
Պարծանք մեր դու Հայկ։

Գերեզմանք կոչի դաշտն այն,
Ուր բեկն ամբարտաւան
Եւ զօրքն իւր անկան կործան
Ի բազկաց քոց, ով Հայկ։

Արդ՝ պընդեալ զսիրտս մեր
Հայասատան, որ էր յաւել՝

Սիրեցուք 'ի փառս մեր
Գուշիլամ «փառք մեր Հայկ»:

—

50

Ասի թէ սիրեմ զքեզ.
Դու 'ի քեզ 'ի նպատներ ելար.
Գան ալ թէ անցաւ աշխարհս,
Որ այլ քեզ չ'կայ սիրոյ ճար:

Երթամ մեկնիմ այլ սիրեմ,
Որ աչուքն քեզ նմանի
Զանունդդ նարա դընեմ.
Որ լսեա՝ սիրտդդ նուազի:

Թէ նուշերն աչացս ելար,
Թէ շաքարն ինձ անպիտանացար,
Թէ դուն սիրելս խընծարն,
Այլ իմ աչքիս մի' երևնար:

Երթամ սուրբ Սարգիս մոնաստ,
Անիծեմ, որ դուն իմանաս.
Ոչ կաղնաս, ոչ կուբանաս,
Սարկարտան մնաս քան զիս։

Քանի՞ ու քանի՞ ասեմ—
Վարդ մի՛ սիրեր, փուշ ունի,
Գնա՛ մանուշակ սիրէ,
Փուշ չ'ունի անուշ հոտ ունի։

Վարդին բացուած մի՛ սիրեր,
Որ գայ 'ի ծոցդ թառամի
Վարդն բուլբուլիկ սիրէ,
Որ գայ 'ի ծոցդ բացուի։

51

ԵՐԳ ԵՐԵԽԱՑԻՑ

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն 'ի բարին,
Ծիսն 'ի ծառին,
Հաւն 'ի թառին։

Ծոյլ մարդկանց քունն է տարի,
Աշխատաւորն՝ վեր կաց բանի։

Երկնքի դրռներն բաց էր,
Ոսկի աթոռն դրուած էր,
Քրիստոսը վրէն նստած էր,
Լուսաւորիչն կանգնած էր,
Ոսկի գրիչն բռնած էր,
Մեծ ու պրսակիկ դրրում էին,
Արդարները խաղում էին,
Մեղաւորքը լալում էին,

ՅԶ (*)

ԸՍՏ ԵՂԱՆԱԿԻ «ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՋԻԿ ԵՄ ԵՍ» ՏԱՂԻՆ։

Ես Տապան նառեալ՝ի զաղաթ սարին,
Իբրև պահապան Հայոց աշխարհին,
Գիշեր և ցերեկ կոչեմ և ողբամ,

(*) Գործ երգիչ Սէյրանի

Իսկ Հայք զիս թողեալ, պաշտեն օտարին.
Ո՞ւր է Հայ, ո՞ւր է Հայ, ո՞ւր է Հայ, որ ասէ՝ վա՜յ, վա՜յ:

Կորուսեալ զդահ, գայիսոն և թագ,
Անյրի մնացի, անզարդ, անպսակ.
Մոխ յանկողին զանազան արանց,
Եղէ անպատիւ ես տեսակ տեսակ. Ո՞ւր է Հայ, և այլն:

Զիս թողին անտէր, եղեն ցիր ու ցան,
Հայաստան մնացած այլոց ապաստան,
Թշնամիք զնա կոխան արարին,
Վէմք հիման նորա, տե՛ս, թէ ո՛ւր հասան: Ո՞ւր է Հայ,
և այլն:

Արուսեակ բաղտիս յանդունդն ինքաւ,
Ճրագ վառաց իմոց՝ ի հողմոյ շինքաւ.
Որդիքն իմ՝ նման անմռունչ գառանց,
Ի ապանդ մահու տարան զահիճաւ: Ո՞ւր է Հայ, և այլն:

Գարունն իմ կորոյս զիւր տաք եղանակ.
Ձեռքեր զշուշան, վարդ և մանուշակ.
Սէյեադ, արիւն իմ սարուցեալ մնաց,
Զի ո՛չ ծագեցին Լուսին, Արեգակ.
Ո՞ւր է Հայ, ո՞ւր է Հայ, ո՞ւր է Հայ, որ ասէ՝ վա՜յ, վա՜յ:

53 (*)

Ի հանդէպ «Ասումես զիմացիր՝ ոնց զիմանում,
մի թէ ես եմ քար՝ դարդիս արա՛ մէկ ճար» Աղբար Աղամի խաղին

1 Ասումես ցամաքի՛ր՝ ոնց ցամաքեմ. մի՞թէ ես եմ
Ջուր՝ վառվռումեմ առանց հուր,
Սէրըդ Ջիկհարըս կտրատումէ նըշտարի պէս սուր՝
մէկ ցաւս է հարիւր,
Աշխարհն ինձ համար լոյս չէ տալիս՝ մթնումէ
մրուր, երբ տրտումեմ՝ տխուր։

2. Սէրդ ինձ հանապազ չարչարումէ՝ չէ՛ տալիս
խնդում, հոգիս է աւանդում,
Քեզնից առաւել, ով սիրահարդ անզատեմ՝ այլ ում,
աշխարհն է թնդում,
Վա՛յ իմ այսքան աշխատանացըս, որ անցանի զուր,
ինձ կսկիծ է մընում։

3. Վասն էր կամիս պատժել աղքատիդ չարաչար վշտոք,
սարսափելի վիրոք,
Այսքան աղաչումեմ, աղերսում՝ քեզ պաղատանոք՝
և լալագին աչոք,
Տեսոյդ կարօտիս արժանի արա՝, ուրախութիւն
տուր, խղճալի մի՛ թողուր։

(*) Գործ աշըղ Նիրանի

4· Զայնդ լսելու փափագումեմ՝ մէկ խօսքիր անուշ՝
վասն էր բարբառիս յուշ՝
Երբ բարկանալով, երբ սատկութեամբ արկանումես
փուշ, ես ընդունեմ զդուշ՝
Երբ արկանէ սէրդ յոտս իմ երկաթեայ անուր,
ոչ երկիւղ է զարհուր։

5· Այլոց տալով սէրդ տեսնելուս ցաւումեմ շատ վախտ՝
էլի՛ ես եմ անբախտ,
Վասն այն պատճառաւ որտի իմումեմ սէրդ է անխախտ
բայց դու ես ապերախտ,
Վա՜յ քեզ, Նիրանի, ցաւերդ է հազարաւոր բիւր՝
արտասուքդ է աղբիւր։

54

Ողբալից բանք Անի քաղաքին Հայոց առ Հայաստէր ոմն, որ գնացեալ էր նմա ի տեսութիւն.

Անի քաղաք նստեր՝ կուլայ, չ'կայ ըսող՝ մի՛ լա, մի՛ լա։
Կսես՝ քիչ է,թո՛ղ, ճնա՝ լայ· ախ, երբ լսեմ՝ մի՛ լա, մի՛ լա։
Շատ ցաւերով կ'այրիմ՝ տարիմ, չուզեմ մէկ մարդ հա-
ւատարիմ,

Որ խղճալոյս գայ՝ մտանեայ, հէչ չէ ասէ՛ մի՛ լա, մի՛ լա.
Ա՛յ Հայ տղայ, խղճա՛ լինէի, տես՝ թէ քո Անին ինչպէս է,
Հերիք՝ ես լամ, դու չ՚գթաս, չէ՞ քոյ Անին ափսոս է։

Ա՛ս ու վախով օրերս անցաւ, լալէն աչքերս կուրացաւ.
Որբ մնալն ինձ վիճակեցաւ, բախտս բնաւ զիս մոռացաւ.
Կորուցեր եմ թագաւորներ, ժողովեր եմ զլխիս քօա բուվեր,
Որք միշտ կ՚երգեն «Անին անցաւ, Անին անտէր աւերեցաւ»

Անին եմ շատ մարդաբնակ, մնացեր եմ դատն աւերակ.
Իմ լայն, իմ կոծն, իմ աղաղակ՝ անտէր որբերու նմանակ.
Երբեմն էի շատ անմման, Հայոց քաղաք Արևելեան.
Աւերեր եմ սեփահատակ, Նատեր՝ կուլամ ես միայնակ։

Եկար՝ տեսար դարձեր՝ կերթաս, լալով կ՚ասս՝«բարեաւ մնաս»
Ատուած սիրես՝ չ՚մոռանաս, Մատիս սարին երբ մօտենաս,
Ըսես իմ քաջ Արարատին. «Նատեր՝ կուլայ քո ճեղճ Անին»,
Կ՚ասէ. երբ աւետիք կ՚տաս, թէ՝ իմ «Անի, հերիք է լաս։»

55

ՉԱՆ ԳԻԼՈՒՄ, ՉԱՆ ԾԱՂԻԿ·

1

Ծառս տակը մանիշակ, Չան գիլում՝ Չան Չան,
Իմ եարը քանց քեզ չիշակ, Չան ծաղիկ՝ Չան Չան.
Ո՛թ թռամանիցն անց կենամ, Չան գիլում՝ Չան Չան,
Քեզ կանեմ եարս մշակ, Չան ծաղիկ՝ Չան Չան։

2

Տեղ եմ՝ քցել զալամքեար,
Մէջն եմ դրել գեալանթար·
Ես մի բուռը լեզակ եմ,
Բեզերգեանի տուզակ եմ։

3

Սիրել եմ սերն երեսին,
Ըէյհան թերն երեսին·
Ո՛վ իմ սիրածը ինձ չիտայ·
Ատուծոյ կրակն երեսին։

4

Զաղայս մանի մանի·
Գունս անոյշ կըտանի·
Իմ եարս սարում՝ քօլում,
Իմ քունս ո՞նց կ՚տանի։

5

Գեարը նի՛ մոայ, խոր ա,
Գաթան շաբիկս նոր ա·
Իմ նանին խաբար արէք,
Ես օլքեայ օլքեայ կորայ։

6

Զաղայիս դուռը տաշած,
Աղբիւրս գիլը քաշած·
Կեռ կեռ ունքերիդ մեռնում,
Ոսկէ զալամով քաշած։

7

Մեր կորովը քօչ ա երթում,
Քօչ քօչի մէ՛չ ա երթում·
Էրնէկ էն քաւեր աչքի լսին,
Օխտն աղբօր մէ՛չ ա երթում։

8

Հանքէն՞ գաս՝ դեղը մանես,
Իմ քյաճ տեղը մանես.
Ինձնից դիւման եարի՞ բռնես,
Բի մուրվաթ, հոլը մանես

9

Գնացի Ջուրը Ջըրի,
Ոտս ընկաւ օձի լեղի.
Իմ հօրն ու մօրն ի՞նչ ա-
սեմ.
Ինձ տուին զարիպ տըղի:

10

Մարիկ արէք էն՞ ղըշլին,
Ոտը դրելայ փըշլին.
Գլուխս ղուրբան կ՚ասամ,
Զալ աչք, կարմիր թշլին:

11

Տուն եմ շինել զանանայ
Ղառղուս կ՚ասամ դիմանայ.
Կուռդ մեկնի՞ Ջուրն ինձ
տուր,
Խմեմ՝ սիրտս հովանայ:

12

Ոչխարս արել եմ դուզը,
Ջոկել եմ զարագեօզը.
Աղջուխդ զարկի՞ նախշեմ,
Թաքի տուր քաքուլիդ թոզը:

13

Դու նստել ես դօշակին,
Ուշ ու միտքդ վեշակին.
Խմել ես նռան դինին,
Հոտ քաշել մանուշակին:

14

Անձրև եկաւ շաղալէն,
Ուռուս տերև դողալէն.
Հրէս եկաւ իմ աղբերն,
Ալ ձին տակին խաղալէն:

15

Ես մի՞ կանանչ խիար եմ,
Քո ջանին իխթիար եմ.
Երթաս՝ երթաս, յետ
կանես,
Իմանաս բէլու եար եմ:

16

Քարին տակը քարոտ ա,
Պարնի ճիանն արոտ ա.
Թամամ օխտը տարի ա,
Քայլն՝ աղբօրը կարոտ ա:

17

Սարիցը Չմեր ա երթում,
Հարցրէք ո՞ւր ա՞ երթում.
Գնին մահտաց ա տրել,
Եարոջը տէս ա երթում:

18

Ծալիկ ունիմ՝ ալաց ա,
Սլայ չի՝ ալիալայ ա.
Եար բռնիլը չաւ կլնի,
Ցայ թողալն բալա ա:

19

Սարի թրմնջուկ թաղա,
Զաւզ ու մեխակ քեզ
մաղա.
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին ո՞նց սա-
զայ.

20

Կանանչ տնիւր մէյտան ա.
Տեսէք իմ եարը տանն ա.
Նոր ծլած բէղիդ մեռնեմ,
Ոսկէթելի նման ա:

21

Բերդէս կուերն ցել ունիմ.
Սլ աբրշում թել ունիմ,
Թիլիկ միլիկ տարկաւոդ,
Եա քեզանից մէյլ ունիմ:

22

Մի ջաղաց երկու դրանի,
Բարձ դրէք եարս կռնի.
Եա դու մի բաղում՝ պ'տինք,
Եա չինարի, դու հռնի:

23

Հաց եմ թխել, գարի ա,
Իմ եարը սաֆարի ա.
Սաֆար երթալուդ մեռ-
նեմ,
Խօսքերդ հաքարի ա:

24

Սարէն կ'գայ ձիաւոր,
Մեր տունը չարդախաւոր.
Հրէս եկաւ իմ աղբեր,
Երեք օրվան թագաւոր:

25

Սարի խոտը ծեղվէ ծեղ,
Աղբեր երթանք միատեղ.
Որ Հարամին վերայ տայ,
Գլուխ տամ զլխիդ տեղ:

26

Արևը կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Յիսուն օր պաս եմ պահել,
Իմ աղբօր ճամբի համար:

27

Խնձոր ունիմ կրծած ա.
Զորեք կողմն երծաթած ա.
Աղբերս ուզեց, տուի ոչ.
Ակիզ եարի զրկած ա:

28

Մատանիք ոսկէջրած,
Այ տղայ, դու ինձ գրուած.
Դու Խանին նօքար պրտես,
Ես քո ծոցը զանջիւրուած:

29

Կանգնել ես ախտա բախտա,
Լաչակիդ տուտը կախ ա,
Սև տղայ, ապիտակ աղջիկ,
Բռնել է.ք իրար եախտա:

30

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բոյիդ ամաչում էլ չես,
Եկայ՝ կշտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանաչում էլ չես:

31

Երդիկ երդիկ բռնել ես,
Երդիկակոճին կռնել ես.
Իմ նանը քեզ աղջիկ էի տալ,
Անոյշ քունդ կարել ես:

32

Արևն ընկաւ մեր պատին,
Աղբայրութիւն իմ տատին.

33

Իմ աղբերը սարումն ա.
Շուին գոտկածալումն ա.

Հոգիդ դատուի, այ տատի,
Ինձ խի՞ տուիր կռնատին։

34

Զրի վերայ սաղ պըտի.
Իմ օրդակը ղաղ պըտի.
Ի՞նչ եմ անում թուլունդին,
Իմ եարը Շահպաղ պըտի։

36

Այ եար, այ եար, կռնել ես,
Մարայ աղլուխ բռնել ես.
Բարև տուի, առար ոչ,
Մաղնար թարկս տուել ես։

38

Բաղումը կար բաղ-
մանչի,
Շուին աչէր ու կանչէր.
Թաբուն դառաց՝ դուրս
թռան,
Մինն իմ եարի նման չէր։

40

Մեր դրանը ուռի ծառ,
Ասկէ կաքաւ վըէն թառ.

Աղբեր Ջան, շուիդ աչա,
Գիրդ Լօռուայ քարումն ա։

35

Մի բարձ եմ արել՝ իմն ա,
Մինն էլ եմ արել՝ իմն ա.
Գեանջու քարանն գա-
լիս ա,
Միջի թաւադն էլ իմն ա։

37

Տեղ եմ քցել՝ փոթ կ'տայ,
Բարձ եմ դրել՝ սոթ կ'տայ.
Մեռնեմ միջի քնողին,
Անոյշ խնկահոտ կ'գայ։

39

Այ տղայ, դու հուր ես՝
մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես,
Մուղարլամ՝ թառլամ շոր
ես,
Համբարձումդ, գիշերն ուր ես։

41

Արևն արեգունի,
Իմ եարս գեղարքունի.

Երթայր ու գայր՝ օրօր տայր,
Անլան ծաղիկ տանիլ տայր։

42

Հայ օրն, օրն ծաղիկ
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Անլալայ խալիս եմ կիտել,
Էն էլ քեզ օրն ծաղիկ։

44

Նախրատաւիին խնկի ծառ,
Խնձոր քցեմ՝ արի՛, տա՛ր.
Ուրբաթ՝ շաբաթ քեզ մօհ-
լաթ,
Լոյս՝ կիրակի արի՛, տա՛ր։

46

Մեր դրան առաջին մի՛ դա-
րան,
Աղջկերքն եկան, նի՛ դառան.
Կուռս տարայ՝ որ բռնեմ,
Շարաճ մարդարիտ դառան։

48

Ես աղջիկ եմ, ա՛լ կուզեմ,
Անս ծալուծա՛լ կուզեմ.

Գեղարքունեաց սարը փուլ
գայ.
Բալ.քի իմ եարը տուն գայ։

43

Ամպելայ ամպի տակին,
Ծունկս ծնկանդ տակին.
Ես քեզ ո՞ր տեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին։

45

Մեր դրան առաջին մի դա-
րան,
Տղայքն եկան նի՛ դառան.
Կուռս տարայ՝ որ բռնեմ,
Թաղի ու թուլայ դառան։

47

Սանդ կ'ծեծեմ, խաղ կա-
նեմ,
Մաշիկը ոտիս լախ կանեմ.
Ա՛յ տղայ, դու շատ մի՛ խօ-
սալ,
Մուհնը ըռխիցդ կախ կանեմ։

49

Հայ էրն ա՝ էրն ա.
Տղայքն ձեր տէրն ա.

Որ տուն ը որ ես մտնեմ,
Ոտքին սարէսար կուզեմ։

Աղջիկք, դուք շատ մի՛ խօսատք,
Տակի դէհն ձերն ա։

50

Աղջիկ՝ աղջիկ, ա՛լ աղջիկ,
Աչքերդ չալչալ աղջիկ,
Դու մեր տանը հարս պըտես,
Իմ քիրը քեզ Տալ աղջիկ։

51

Ա՛յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու. տորոն ծաղիկ,
Տարենը մի՛ հետ կ՚գաս,
Գամ քեզ օրօն, ա՛յ ծաղիկ։

52

Աղբեր հանաքիդ մեռնեմ,
Ոսկէ դանակիդ մեռնեմ.
Ճամբայ ելթող՝ շէկ աղբեր,
Դուքքան բաղարիդ մեռնեմ։

53

Ա՛յ տղայ, դու հէրիս՝ մէրիս
Ո՞ւր եկար դու կէս գիշերիս.
Տեղումն քեզ տեղ չ՚կայ,
Գլուխդ դի՛ր կռնեարիս։

54

Զաղացս ման եմ տուել
Սիրել եմ, չան եմ տուել.
Օխտը տարի սէրութիւն,
Մէկ օր պայման եմ տուել։

55

Ա՛յ տղայ, դու բաղումն արի՛,
Ոտներդ շաղումն արի՛.
Էս թաղը ղալմաղալ ա,
Մանտուր, էն թաղումն արի։

56

Զաղացիս աջոյ կուռը,
Կ՚զընկայ միջի դիւը.
Վա՜յ, իմ սիրած բիւլբիւլը
Գարշեցին Խանի դուռը։

57

Ճրագ դնեմ լիսացու,
Կարմիր խառէն քիսացու.
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու։

58

Սրտովը հեշտացելայ,
Ճամբէքը կոշտացելայ.
Իմ նանին խաբար տարէք.
Մուշտարին շատացելայ։

59

Ծաղիկ եմ քաղել՝ դեղին ա,
Իմ եարը ձեր դեղին ա.
Հէլ ու միխակ շատ ունեմ.
Հըրէ եարիս ձեռին ա։

60

Ծաղիկ եմ քաղել՝ ա՛լ ա,
Ա՛լ չի՛, ալալայ ա,
Եար բռնելը լա՛ւ կըլի.
Բաց թողալը բալբալայ ա։

61

Առուէդ արասին զուրբան,
Գինուդ կարասին զուրբան,
Ճամբէցը գալող աղբեր,
Սրտէդ հաւասին զուրբան։

62

Ծաղիկ եմ քաղել՝ եարինջի,
Ա՛յ տղայ, վեր արի՛, վինջի.
Իմ մէրը քեզ աղջիկ չի՛ տալ.
Գանի ման գաս եաւընջի

63

Վարդ եմ քաղել մաղերով,
Վայր եմ դրել շաղերով.
Հորէս եկաւ իմ եարը,
Ալ ձին տակին խաղալով։

64

Ա՛յ տղայ, դու բաղի մինջին,
Ոտներդ շաղի մինջին.
Կանչի՛, կանչելուդ մեռնեմ
Ես եմ քո հաղի մինջին։

65

Զուր ա գալի լաի տալէն,
Երկու խնձոր ծաի տալէն.
Հորես եկաւ իմ եարը,
Թուխ գլակը թաի տալէն։

66

Ա՛նց կենամ գետի կուռը,
Գաղեմ մի գասթայ նուռը.

67

Զուն գնեմ վըրէն խաշեմ,
Ելի՛լեմ կտուրը, եաշեմ.

Ո՛վ իմ սիրածն ինձ չի՛ տայ,
Կ՚քարշեմ Խանի դուռը

Տեսնեմ, իմ աղբերը դա-
լիս ա,
Զոքեմ. Հաքմէքը քաշեմ։

68

Ա՛յ տղայ, դու սև Հուխաւոր,
Սաղմոսը ծոյլիդ սովոր.
Էրնակ կ՚տամ էն օրը,
Տունս կ՚գաս թագաւոր։

69

Զաղացի դուռը փոս ա,
Քար կ՚քցեմ, կ՚խօսայ.
Կանչի՛ կանչելուդ մեռնեմ,
Իմ նանի ազիզ փեսայ։

70

Ա՛յ տղայ, իր անել տուր։
Մի մատը գիր անել տուր.
Ինձանից քեզ Հար չ՚կայ,
Քաքուլդ վեր անել տուր։

71

Ծաղիկ, Ծաղկեանայ ես,
Ասլըդ Երևանայ ես.
Տարեմը մի Հետ կ՚գաս,
Մագեամ Նուբարխանայ ես։

72

Զաղացի դուռը տարթ ա,
Կտուրը լիքը մարդ ա.
Հորէս եկաւ իմ եարը,
Դօղիկը լիքը վարդ ա։

73

Ձեր բաղի դուռն բաց ա,
Ոտներդ շաղով թաց ա.
Եարիցդ Հեռացել ես,
Աչքերդ լիքը լաց ա։

74

Աղջիկ, մազերդ Հիւսէիր,
Թուշդ երեսիս քսէիր.
Ելէիր բարձիս վերայ.

75

Սև Հաւի ձուն փուրն է,
Իմ եարը գեանջու կու-
ռըն է.

Բիւլբիւլի պէս խօսէիր։

76

Աղջիկ, գնանք մեր բաղը,
Պոկեմ շամամիդ թաղը.
Էդ երեսիդ շաֆաղը,
Հանելայ սրտիս դաղը։

77

Գեանջայ, քու սարը փուլ դայ,
Բալքի իմ եարը տուն դայ։
Վերնաքամին գալիս է.
Թինգլայմէջքս տալիս է.
Մէյդան արէք, անց կենամ,
Կարօտ եարս գալիս է։

78

Այ տղայ, անունդ ա Սարգիս,
Արի նստենք էս կարգիս.
Ես ու դու բաղում պիտիմք,
Ես չինարի, դու կ՝ էիզ։

79

Զուր է գնում արխումը
Աբըրշում ա չարխումը.
Էն օրին էրնեկ կուտում,
Զմարդ կանգնես խալ-խումը։

80

Մտիկ արէք էն զուշին,
Ոտը դրելայ փուշին.
Մեռնեմ չալչալ ունքերին,
Թուխ աչք՝ կարմիր թշին։

81

Մէկ խնձոր ունեմ՝ կըծած է,
Բոլորքը զառով նըշխած է.
Աղբերս ուզեց՝ տուի ոչ,
Ասի՝ եարիս զըկած է։

82

Սպիտակ ձին նալն ինչ կանէ,
Սիրունն խալն ինչ կանէ.

83

Գնայի, ջուրը տեսայ,
Շաբաքայ դուռը տեսայ.

Եարն որ եարին սիրէ,
Աստուծոյ ինչ կանէ

84

Զուն դնեմ թաւէն խաշէմ,
Գնամ կարովը եաշեմ.
Եթէ եարս դալիս է,
Զոքեմ՝ շէքմէքը քաշեմ:

85

Գնացի Ջուրը լուացք,
Սատոնս էր ոսկէջրած,
Իմ հէրն ու մէրն ինչ ա-
նեն,
Ճակատիս էս էր գրած:

86

Ա՛յ տղայ, դու ա՛լ կապաւոր,
Տուն ունես չարդախաւոր.
Էն օրին էրնեկ կուտամ,
Իմ տուն՝ տուն դաս թադաւոր:

87

Իմ տղքերս ծառի տակին,
Սաղմոն կուտան տակին.
Սաղմոն դիր է դառել,
Անգամ բիւլբիւլէ դառել:

88

Մեր տան յետնէն մի մառան,
Տղերքն եկան՝ յետ դառան.
Զեռս տարայ թէ բռնեմ,
Դիպ լա՛լ ու մարջան դառան:

89

Աղջնիկ ապէտ ա՛լ պիտի,
Բոխչէդ ծալ ծալ պիտի.
Ամ տունն էլ որ տուն
երթաս,
Ոսկին սարէսար պիտի:

90

Սարերի սինձն ինչ է,
Կաթն ու բրինձն ինչ է.
Եարն՝ որ եարին սիրէ,
Ինչ ադուաւին քար կա-
նեմ.

91

Մեր տան տակին վար
կանեմ,
Զալ ադուաւին քար կա-
նեմ.

Խօսք ու զրոյցն ինչ է։
Թէ իմ սիրածը ինձ տան,
Գժուխթիւնս թարկ կա-
նեմ

92

Դար 'ի վեր ջուր է գնում,
Հարցրէք թէ ո՞ւր է գնում.
Գենուն մահանայ է արել
Իր եարի տունն է գնում։

93

Մեր բաղումը մի դարան,
Շատ հարսնաղջիկ նի
դառան
Զեռս տարայ թէ բռնեմ,
Դիմի թաղէ՝ թուլայ դա-
ռան։

94

Ջան գիւլում կասեմ՝ կ'շարեմ.
Տօպրակը կածեմ՝ կու կարեմ.
Կարէ կտուր ման կուգամ,
Քանց քեզ լաւ կու ճարեմ։

95

Մեր բաղումը բաղմանչի.
Սալբի ծառի նման չի.
Շատ հարսնաղջիկ դուրս
եկան.
Ո՛չ մէկն իմ եարիս նը-
ման չի։

96

Մեր տան յետնէն բաղչայ կայ,
Բաղչի միջին րէյհան կայ.
Րէյհանը քաղող պիտի,
Ծոցումը խաղող պիտի։

97

Դու նստել ես գերանին
Ղարղու շուին բերանին.
Ոսկէ ղայթան 'տի գործեմ,
Դնեմ ջիբիդ բերանին։

98

Ա՛յ տղայ, դուն ասա՝ մ'ասա,
Գդակիդ թաքնէն խաս ա.

99

Ա՛յ տղայ, դուն օտար լինիս,
Սև հաւի կատար լինիս.

Իմ մէրը քեզ չէ՛ տալի,
Իմ հօրը քրթամ ասա՛։

Ինձ մէկ խուսմար եար սիրի,
Դուն ճօթ ու պատառ
լինիս։

100

Գիւլում գիւլում, գիւլչիչակ,
Ես ու դու մանանք մին դօշակ.
Մինչև 'ի լոյսը քրշիչանք,
Լուսէն յետոյ կըրկըշանք։

101

Ա՛յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Հարան ու աղջիկ մեծրել
եմ,
Որ գան ու քաղեն ծաղիկ։

102

Զուրը գալիս ա լաի տալով,
Երկու խնձոր ծաի տալով.
Հորէն եարս գալիս ա,
Ա՛լ գդակը թաի տալով։

103

Գիւլում կասեմ՝ կ'շարեմ,
Զուալը կածեմ՝ կ'լարեմ.
Թամամ աշխարհը ման
կ'գամ.
Քեզնից լաւը կ'ճարեմ։

104

Ես աղջիկ եմ՝ ա՛լ կուզեմ,
Բօխչաս ծալէծալ կուզեմ.
Երբ որ եարիս տուն կերթամ,
Գօտիկս քիրմա շալ կուզեմ.

Ն6

Հաւար Զուլօ, մաղաթ Զուլօ,
Սանի գնօրդում, եանղըմ Զուլօ։

Ես Զուլօն եմ Մասարեցի,
Հինգ օր արի՛, մեք տուն կեցի՛,
Դէմ աղօթրան նկեղեցի։

Արևն ելաւ կամար կամար
Զուլօն կապեց ասկէ քամար,
Գեղի բերեմ Ջանիս համար։

Արևն ընկաւ խամուր բերդի,
Գո սէրն ընկաւ մէջ իմ լերդին,
Ես քեզ սիրեմ, թո՛ղ զիս քերթին։

Տան քով անցայ, ճրագն էր վառ,
Դու նման ես զօզանի դառ,
Որբևերցի՛, արի՛ զիս ա՛ռ։

Զաղջի բոլոր ըմէն ուռ էր,
Աշխարհն ասէր, Զուլօն ծուռ էր,
Մէջ իմ սրտին ՝ալ ու դուրը էր։

Թունաւոր վառեր՝ եղեր է մուխ,
Կապել վուշին՝ թորգելայ պուխ,
Ունքերդ համար՝ աչքերդ թուխ։

Օր մը աղէկ՝ օր մը վատ էր,
Կանանչ գլուխ չօլի բադ էր,

Էլի խօսքով զիս կու առէր։

Տան քով անցայ թաքի քելեցի,
Լանգով զարկի՝ զերդիկ բացի,
Եարս տուն չէր, նստայ՝ լացի։

Թառ խորտիկ ասլի զարդա՛,
Քո դարդ մէջ իմ սրտին շատ ա,
Քո ծոյն ընձի նաշխուն օղաչ

Մեր տան յետև արտ մի եօնջայ՝
Թխեմ գաթա, ճամբեմ խօնջայ,
Առնեմ Զուլօն, շըջեմ գնանջայ,

Զատ խորտիկ անմահութիւն,
Սիրելիս, մի՛ ըներ վատութիւն,
Թորգեմ՝ երթամ զարիպութիւն։

Դու կանենալ ես դէմ ամրոցին.
Զուխտակ շամամ մէջ քո ծոցին,
Դու կ՚խաղաս խետ վըզնոցին։

Մեր տան յետև Զուխտ մ՚գերան,
Բոլոր երես՝ պատիկ բերան,
Քո սիրուլիդ դռներ վերան։

Մեր տան յետև արտ մ՚ գարի,
Երթանք՝ քաղենք, տանք խիարի,
Ճամբեմ Զուլոյին դիարի։

Պալ Զուր պրծել՝ կու գայ սարէն,

Դեռ չէ՛ սաղցեր սրտիդ. եարէն,
Ես ի՞նչ անեմ զիմ քեօր սիրթ արէն։

Զուրն է պրծել՝ կու գայ սարէն,
Կու դըլդըլայ մարմար քարէն
Եարն է դարձել իր իլըարէն,

Զաֆար Աղի նշխուն օղէն,
Ն՛որ եմ ելել Զուլոյի մօտէն,
Զե՛մ կշտացել անոյշ հոտէն։

Նշխուն օղա՝ չինի քեասայ,
Նանէին, գնա՛, թաքուն ասա՛,
Էսօր ես Զուլոյին թադնայ տեսայ

Դու ելել ես՝ կ'երթաս 'ի բէր,
Ո՛չ բէրն ըլի, ո՛չ բէրատէր,
Տ՛օ պատիկ հարս, նոր սիրոյ տէր։

Դու ելեր ես՝ կերթաս լոգին,
Դու ու քո Ջուխտակ տեղեր կին,
Ո՛րն տեսնի՝ ելնի հոգին։

Քօ մօր անուն կըսեն Սառայ,
Ես քո սիրոյդ կրակ վառայ,
Ղըսմաթ չ'ելաւ՝ քեզիկ առայ։

Դու կաններ ես դարդեահի դուռ՝
Մէջքդ նմանի խանչալի բուռ,
Զիս ըրեցիր սավդա ու ծուռ։

Ամպերն եղեր բուրթա բուրթա,
Զուլմն կապեր բալաք փուրթա,
Ես քեզ սիրեմ՝ թող ըսեն սուտ ա։

Ցնէն ելար հալա հուլա,
Ծիծերդ նմանի բանբկի քուլա,
Աչկունքս տեսան, սիրտս կուլա։

Առաւօտուն բարի լուսուն,
Քո կոճկներդ հարիւր յիսուն,
Ես զուրբան եմ էդ քո տեսուն։

Զանունդ գիտեմ, ախ չեմ ասի,
Մանիշակ խառնուեր - հետ քո
վարսի,
Զեռս տարայ ծոցդ՝ խոցերդ
հասի։

Զանունդ եմ ասեր զանազան,
Իսկի չի կայ քեզի նման,
Ծամերդ էր ճիւղ ճիւղ ըէյհան։

Դու կու քելիս եանա՛ եանա՛,
Մէրկանդ ըսի՝ դուռը բանայ,
Զիրար սիրենք՝ մարդ չիմանայ։

Մեր տուն ձեր տուն մէկ դառապով,
Ելնես մտնես կանանչ կապով,
Զիրար սիրենք Աստուածն ապով։

Դու ելել ես կերթաս Կանդառ,
Ծամերդ ուսերդ էլէ խանդար,
Ես քեզ սիրեմ՝ թող զարկեն
Չանկալ։

Մեր տուն ձեր տուն դիմաց դիմաց,
Հար ենք աչք ընեմ իմաց,
Մի երեսի հայէն գնաց։

Աշխարհ ալամ քեզ կու գովեն,
Օր մ՝ չելար սէլի հովէն,
Ծամերդ քաշած վանայ ծովէն։

Մեր տան իսկ արտ մ՝ մասուր,
Զուլօն առնեմ՝ մանեմ մասուր,
Զուլօն սիրեմ՝ թորգեմ սկեսուր։

Հելէ՝լ վելէ՝լ Մարու գոմէշ,
Իմ ձեռ թալեմ գեալաշի փէշ,
Զուլօն եղնի ընձի փէշ-քէշ։

Մեր տան յետև արտ մ՝ պընդուկ,
Ձեր տան յետև արտ մ՝ պընդուկ,
Զուլօն առնեմ՝ մանեմ պընդուկ։

Գամին եկաւ էրան էրան,
Գնաց հասաւ Մշու բերան,
Մշու հաւեր թեւաւորան,
Գեալաշի տուն սեւաւորան։

Մեր տան եւեւ քառասուն կարաս,
Քառասուն կարսի գինին էր խաս.
Ոսկէ գիւդիւմ՝ արծըթէ թաս,
Ամէն թասին պապիկ մ՚տաս։

Բուխարին եկայ՝ ցախ էրի,
Եափունջիս պատէն կախ էրի,
Մտայ ծոցդ՝ շիլթախ էրի,
Պապիկդ առայ, օխայ էրի։

Զուխտ մ՚ դուրթան դաշտ կու բանի,
Զուլօ խաթուն խաց կու տանի,
Մին կու քնէ, մին կու կայնի,
Աչքով՝ ունքով մարդ կուապանի։

Մեր տուն ձեր տուն մօտիկ մօտիկ,
Դու կապել ես՝ կարմիր գօտիկ,
Երթանք՝ քաղենք կանանչ խոտիկ,
Տեսնունք՝ վի՞ր եարն է խորօտիկ։

Եկէք՝ երթանք դարի պոկենք,
Հայլի բերենք՝ գլուխ կոկենք,
Երթանք՝ Զուլոյի դրանը հոքենք,
Բալքեամ Զուլօն ընդեանց պակենք։

Մեր տուն ձեր տուն երես երես,
Ապրապարեմ՝ Հայլիս բերես,
Արարիչ Աստուածդ սիրես,
Զուլոյիս անուն չ՚աւիրես։

Մեր տան յետև տուն մի կարաս,
Չեր տան յետև տուն մի կարաս,
Ամէն կարսի գինին էր խաս,
Ոսկէ գիւգիւմ՝ էրծաթէ թաս,
Ամէն թասին զաղ մը կուտաս։

---

57 (*)

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ.

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
ախորժ, ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք, ականջիս հասած.
դու սիրոյ քաղցրիկ առաջին յոգուած,
Մանկական լեզուիս թոթովանք տրկար,
հընչումես իմ մէջ դու միշտ անդադար։

Ո՞հ, ինչպէս պըղտոր է պըղտիս օրը.
երբ պանդուխտ էի օտարի տանը.
Եթէ հարկ էր ինձ այլազգի լեզուով
իմ միտքը յայտնել օտար բառերով,
Որ երբէք սիրել կարելի չէ ինձ,

(*) Գործ Պ, Ս. Նազարեանց.

Որ ձայն ողջունի բնաւ իսկ չեն ինձ։

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
այդ ինչպէս քաղցրը հընչումես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
քո ճոխ գանձերին, հոգով հայանալ.
Ասես թէ ահա գանչումէին ինձ
պապեր ու հայրեր խոր գերեզմանից։

Հընչեր դու հընչեր այժմ և յաւիտեան
մայրենի լեզու, բարբառ սիրական.
Արի՛, բարձրացիր հնութեան փոշուց,
դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց.
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
որ ամենայն սիրտ վառվի քո սիրով։

Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
սուրբ է այո՛ միւս, այլ ձև ու ոճը.
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
իմ սրտի սէրը յայտնել արժան էր
Իմ երանական մտածութիւնքը—
ապա կը խօսեմ իմ մօրս խօսքը։

58 (*)

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան քաղցր իմ Հայաստան
Ոգիքս յանուն Հալեցան.
Մինչև ցերբ ես պանդուխտ,
Սրտիս իմ երբ լցի ուխտ։
Աչքս արդեօք անձկալից
Երբեմն զքեզ տեսցեն
Աչքս այս արտասուալից
Դարձուցին արդեօք։
Շուրթն իմ ի հող կենաւոր
Տայէ զՀամբոյրն ուխտաւոր,
Արդեօք զլուխս այս վշտակոծ
Հանդիցէ քոյդ ի ծոց։
Հայաստան սէր իմ Հայաստան
Ոգիքս ի տենչ Հալեցան
Մինչև ցերբ ես ի քէն պանդուխտ
Սրտիս իմ երբ լցի ուխտ։

(*) Գործ Հ. Խորէն Վ. Գալֆայեան

59

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ (*)

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Ցեւս դառնաշունչ ձմերանոյն
Եւ ի գաւառն իմ Հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն։
Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճռուոլեն նորեկ ծիծառունք
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ով ցանկալեղ իմ Հայաստան։
Ոչ Հելուետեան ինձ դաշտալայր,
Եւ կամ զուարթ մարգագետին
Ոչ քան զքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկին։
Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Գոյովդ յար տապիմ անձկով
Ի խանձարուրդ իմոց կենաց
Ո՛վ Հայաստան առնեմ քեզ դարձ։
Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկցի տխրոց իմ գեղ դալար
Եւ յինէն խոյս տացեն վայելք

(*) Գրած Պ. Մ. Պէշիքթաշլեան

կենաց թեթև ի գարշապար։
Ուր հէք մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երգել զսէր
Զնվինջ ի ծոցդ առնեմ յայնժամ
Ով ցանկալեդ իմ Հայաստան։

60

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ (*)

Հայաստան երկիր դրախտավայր,
Դու մարդկայնոյ ցեղիս որրան
Դու և ընիկ իմ հայրենիք,
Հայաստան, Հայաստան, Հայաստան։
Ի վեհ անուանդ սիրտ իմ ուռ, յոյժ
Ոգևորի ի նոր խրախոյս.
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ՝ ի քեզ յոյս իմ միայն։
Հայաստան . . . . . :
Հայաստան անուն փարելի,

(*) Գործ Պ. Յովհաննէս Միրզա Վանանդեցւոյ։

Ի քեզ Հանդիստ Նոյեան տապան
Եդիտ և քեզ ապրեցաւ Նոյ·
Հայաստան · · · · · · · ։
Գնաք քաջառաջք աղնաբուղխ·
Զհողդ բարի առնեն յուռթի·
Քեզ ապրիմ ես, քեզ միշտ ընծամ,
Քեզ, քեզ պանծամ փառք իմ միայն։
Հայաստան · · · · · · · · · ։
Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան
Քո զեղիւռին քաղցր է շնչիւն։
Հայաստան · · · · · · · · ։
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան·
Զքեզ զքեզ սէր իմ միայն·
Հայաստան · · · · · · · · ։

61

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾԱԴՐՈՒԻԼ ՍԿՍԱԾ ՕՐԸ

25 ՕԳՈՍՏՈՍ 1860 (*)

Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր
Ի՞նչ կյապաղէք ելնել ի հանդէս.
Ի՞նչ կյապաղէք.— սիրտ կդիմանա՞յ,
Սիրտ որ Ազգասէր ըլլալ կցանկայ,
Տեսնել Հայրենեաց այսքան բիւր աղէտ,
Եւ դեռ անտարբեր ցարդ մնալ յաւէտ։
Խեռ ատելութեան և չար նախանձու
Սերմերն ու ոգին հեռո՛ւ մղենք հեռու.
Սիրտ սրտի կապուած, թև թևի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած.
Օ՛ն վազենք յառաջ ի սուրբ խաչն վառած,
Օ՛ն երթանք յառաջ, և անձնանուէր՝
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր.
Հայ մի վհատիր, սիրտ ա՛ռ և սիրտ տուր,
Տկարք զօրանան, քաջք խրախուսին,
Վատերը բացուին, վատերը զատուին,

(*) Գործ Պ. Ստեփան Փափազեանի։

ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅԵՐՆ ՅԱՌԱՋ ԹՈՂ ԱՆՑՆԻՆ։
ԽԱՉ, ՍԷՐՆ ԵՆ ՆՇԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅՈՒՆ
ԽԱՉ, ՍԷՐՆ ԵՆ ՊԱՐԾԱՆՔ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅՈՒՆ

ՍԻՐՈՅ ԴՐՈՇՆԵՐ
ԹՈՂ ԱՐԴ ՊԱՐԶՈՒԻՆ
ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԵՐ
ԹՈՂ ԱՐԴ ՀՆՉՈՒԻՆ.
ՀԱՅՆ ՄԷԿ ՍԻՐԱ ԵՂԱՒ
ՍԻՐՈՎ ՄԻԱՑԱՒ
ՍՈՒՏ ԵՆ ՈՐ ԸՍԵՆ
«ՀԱՅՔ ԶԻՐԱՐ ԿԱՏԵՆ»։

ՍՈՒՐԲ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՆ ԴԻՐՔԸ,
ԵԿԷՔ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ԵԿԷՔ ՄԻԱՆԱՆՔ.
ԵՒ ԱՒՈՒԻՆՔ ՄԵՐ ՎՇՏԱՑԱԾ ՄՕՐ ՍԻՐԱՐ,
ՕՐՀՆԵԼՈՎ ՏԷՐԸ, ՈՐ ՄԵԶ ՊԱՐԳԵՒԵՑ
ՄԵՐ ԱԶԳԻՆ ԿԱՅՆ ՈՒ ՀՈԳԻՆ,
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ
— ՅԱՒԵՐԺԱՅԻ ԱՐԴԻՒՆԱՒԷՍ։

62

ԱՌ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ (*)

Երիք Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ՚ալ տանք,
Որ Ազգն երբ զԱնի փրկարար կոչեց,
Նոր հոգի, նոր կեանք Անոր պարգևեց:
Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած
Ուղղենք մեր մաղթանք առըբ սրտէ բղխած:
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ,
Ազգն ու սահմանադրութիւն:
Զրկանք, բռնութիւն, վատթար վարչութեան
Ներին մահն ի դուռն Հայոց ապդութեան:
Սահմանադրութիւնք եկաւ զայն վանեց
Եւ կենաց ուղին մեր առջին հարթեց:
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ
Ուր ամեն վայրկեան դոչել պարտ է մեզ
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու սահմանադրութիւն:
Ընչից ամենայն կարծիք անձնական

(*) Գրած Յ. Գ. Սվաճեանց

Խեղդեց ամենայն անհատական ձայն,
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին
Առաջնորդ լինել դարձոց ազգային։
Այն որ Աստուծու ձայն տուաւ մեզի,
Մենք թող առնու ձայնով մ՝ այնպէսի
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու ահմանադրութիւն։
Հայերս անարգուած փրկեց բարձրացուց
Մարդկային կոչման մեզ արժանացուց,
Շնորհեց մեզի, զոր ազատ ատուած
Մարդկային երկրորդ նշանն է դրած։
Որուն շնորհիւն յարդ ստացանք մենք.
Անոր յարդ տալով ապրինք ու երդենք,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու ահմանադրութիւն։
Դու ալ Հայաստան, սիրուն Հայրենիք,
Ալ աչուհետև մի ազար լռիկ,
Զի ահ ալ քու որդիք նոր ոգով բերկրեալ։
Զքեզ հարս կուգեն ունենալ զարդարեալ։
Ա՛լ մի՛ լար մայրիկ լացդ ի զար փոխէ
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երդէ։
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու ահմանադրութիւն։
Հայէր, միանանք մեր մօրն հետ օրհնենք
Զանոնք, որ մեզի տուին տուրբ օրէնք,

Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ ի կեանք փառաւնակ։
Թող և մեր որդիք հետ անոնց անուան
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու սահմանադրութիւն։†

63

ԴԱՇՆԱԿ (*)

ՑԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՄԱՆ ՀԱՅԿԵԱՆ ԹԱՏՐՈՆԻՆ ՈՐ Ի ԽԱՍԳԻՒՂ

Օ՛ն մեր նախնի դարուց կարդամք հրաւէր,
Նախնի դափնեաց՝ սուրբ ձեռաց հիւս զսակօք։
Մեր հայրենի փառաց մանկունքն անվեհեր
Գան յերևան զեղեցկահիւս զխաչօք։
Գունդ ի գունդ
Սիրտք ի թունդ։
Ժամանակաց՝ անցից՝ վասն կրթարան

(*) Գրած Գ. Գ. Զ.

Եւ նոր զիմաց՝ նոր զդայմանց կարդալիր
Ա.հա մեզ նոր՝ արդ կկանգնի տեսարան
թէ կրթութեան՝ թէ հաճոյից արդալիր։
Հոս ձայն կուտանք մենք Ծաղկալից
Հայաստանի սուրբ դաշտերուն,
Եւ կցրուի սրտից թախիծ
Երբ հայրենեաց յիշեմք զանուն։
Ո՛վ սուրբ Հայաստան
Փառաց օթեան
Որբ զաւկներդ հոս
Գնեզ պիտի ոչքան։
Հոս երազ՝ անմահ
Քո նախնի փառաց
Մեզ պիտի վառէ
Ի սէր հայրենեաց։
Մայրիկ Հայաստան
Փառաց դերեզման
Որբ որդիքդ այրիդ
Հոս պիտի ոչքան։
Մէկ մայր մ՝ ունինք մեր Հայաստան և հոգին
Եղբայրութեան սրտերնուս մէջ կանդայ.
Օ՛ն Հարազատ մեր բաղդն ու սէր կաթոգին
Հոս միութեան ուժոյն ընենք ենթակայ։
Եւ ձեռք, ձանք
Միմեանց տանք։

ընդ հանրական սէրն և հոգին հայութեան
Մեզ մատայից օթևանիս նուիրի
Հնչեն Հայ վառք՝ անուն նոր՝ սուր յաւիտեան
Նոքէն Սիսակ, գնդամ ի կեանս հրաւիրի։

Կիերաձնին հոս ոսկի դարք
Հոս տեղ մոքեր կրնան արուիլ։
Կշակուին հոս անկիրթ բարք,
Հոս և ծիծաղ կրնայ դառուիլ։

Ով սուրբ Հայաստան
Քաջայ օթևան
Հոսկէ որդիքդ հոն
Գիրկդ պիտի դան։
Հոս ոճ Հայ լեզուին
Նոր զարդ՝ ձև կառնու
Կեանք անմեղ՝ երկինք
Կազդեն սրտերու
Քաղցրիկ Հայաստան
Մեր հարց օթևան,
Ծոցդ որդիքդ որ դան
Էր պիտի ողբան։

64

ԲԱԺԱԿ ՈՂՋՈՒՆԻ

ԱՌ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ (*)

Ինչէ՛ք զուարթունք՝ և ի ձեր թեւս ապատան
Յայց ելցուք այսօր յանձկալին Հայաստան
Ընծայակապակդ ածէ՛ք այսր զ՚քնար՝
Որ երգէր երբեմն ի դրախտս Արևեայ,
Հանդուցեալ այժմիկ ի շերմաց մեր՝
Զայն տուք զարթուցէ՛ք զորդիս Արամայ:

Ասի զիւցազունք
Թողեալ զդամբան,
Եւ ասի զուարթունք
Երգեսցեն միաբան
Ողջոյն քեզ ողջոյն
Սահմանադրութիւն:

Ով որ յեցեալ ի տխուր սատր զիւցազանց
Զթով յերկինս ածես նամէտ բերս աչաց,

(*) Գործ Թ. Թերզեանց

Ով հայաստանեայց ազի պրպտուէր։
Ահա հաշտ ակամբ ժպտի քեզ Աստուած
Պարզի երդնիրանդ լար կապոյտ յիմթեր
Դառնայ Աղաւնեակ ատով ձիթենեաց

Սիրատ առ Տիգրէս
Որմեայն առ Սեան
Տալով առեւտրս
Հնչեցնեն միաբան,
Ողջոյն քեզ ողջոյն
Սահմանադրութիւն։

Ա՛չ ի յաչ՝ սիրտ ի սիրտ՝ ազի խառն յոգի
Մատիք օն անդր յուսարկէք՝ սիրոք հայեցի.
Զի՛ չքնաղ ակսիլ պարզի արդ յաչս իմ...
Ահա յոյս և սէր՝ որպէս զոյդ հրեշտակք
Առաջնորդեն մեզ,...ով Տէր ..խաբեցի՞մ..
Ո՛չ. զայդ վկայեն սիրոյ այդ բաժակք...

Հայկեանք առ Հայկեանս
Դարք դարուց՝ որ զան
Տալով արձագանս
Կրկնեացեն միաբան
Ողջոյն քեզ ողջոյն
Սահմանադրութիւն։

65

ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ

Տէր՝ կէցո՛ զու զՀայս
Եւ արա՛ զնոսա պայծառս.
Կեցո՛ զՀայս.
Զողորմութիւն վերին
Հաճեսա՛ց ձօնել նոցին,
Զի նովքեմբ մարթասցին
Աստրել յառաջս։

Ո՞վ Տէր մեր, Տէր փութա՛
Զազգ մեր հանցն փրկեա՛
Ի թշնամեաց.
Կարի՛ զաչս նոցուն,
Հա՛ս զարմատոյն զբոյն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՛ հրկոր։

Ի քո ինքեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեա՛ւ։
Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածապզեաց

Շնորհեա՛ պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։
Անջոկդ համատարած
Զազգդ մեր արտահաջած
Փոյթ գումարեա.
Յաշխարհ Արարատեան
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական
Օտար ազգաց
Առաքեա՛ իբարձանց
Զհամակցութիւն կամաց
Ի մերազնեայս
Զոմն ի մէնջ յարո՛
. . . . ազգի մերոյ
Տո՛ւր նմա ցուպ հովժկու
Հովուել զմեզ »։

66

ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

1862 ՄԱՅԻՍ 24 (*)

Ողջո՛յն քեզ ո՛ դաշտ և սիրուն ափունք,
Ուր այսօր սիրով համբ ին Հայկազունք.
Հարց Հայաստանեայց արբազան ածիւնք
Թո՛ղ ցնծան Հայոց ի սուրբ միութիւն.
Հէգ Հայաստանի եմք մեք զաւակներ,
Հայեր ըղձիկ հա՛ս հա՛ս կոչումն է սէր
Եւ Հայրենիք սուրբ Հայրենիք։

Հրեշտակն Հայկազանց
Հոս կը սաւառնի.
Ցառաջ, պապակաց
Ճակատք արժանի։
Սահմանադրութի՛ւն,
Ցորչափ մընայ երկիրս և դո՛ւ
Կեցցե՛ս։

(*) Գործ Պ. Ենչան Զօհրապեան

Առ Հայրենեաց սէր
Որդիք անձնանուէր
Ի շինութիւն տանն Հայկազանց
Կեցցեն։

Ոգին միութեան
Որ զմեզ միաբան
Հոս գումարեց սիրոյ հանդէս
Կեցցէ։

67

Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՅ

ՑԵՏ ԲՌՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ (*)

ՍԱՄԱՆԵԱՆՑ

Յաղատն ի վեր ի Մասիս
Արիք որդիք Հայկեան
Յրուեալք ի մի խումբ պարու
Բառից հողմոց փոլ ազգու
Յաստուածախրախոյս ձայն։
Նախնի կամար բաղմերիւեան

(*) Գրած Հ. Արսէն. Կ Բ

Ահա պատի վնովաւ
Ամարոպայոյզ մըբբրկաց
Հաշտարան պատերազմաց
Տարիալին ցոլացաւ։
Զայն որոտաց ձայն ահել
Խորանաձև յարկէն
Արիադունդ տուն Հայկայ
Զտապալեալ գահիդ արքայ,
Վերականգնեմ ամբէն։
Երդուեալ յաղեղն երկնածիր
Բարձի զբաղդ ձեր ի միտս
Թաթ ձեր յեթեր սրլացաւ
Հակառակորդքն ոուզաւ
Վայր ամենդարամեան։
Դիւցազանց պար թորգոմեան
Տբխրազգեաց յեղխեանս
Ընդլթադոյն դիմաց մէջ
Յաստեղաց բոց վառեն շէկ
Յաւետեաց հրաւիրանս։
Արդ իմ արի ապառաղէնք
Տուք կայթիս հսկայաքալ
Դաշտք ի պղինձ բոցասցին
Լերինք ի նոյշ շուասցին
Զոկաաթոյդ ի գետաք։
Ահա ձեզ Հայկ երկնածին

Հայր ձերում բանակի
Աստարարիակ հովանեաւ
Զեռք ի բարձանց փարեցաւ
Անթափանց նիզակի։
Խումբ պար առեալ զարքայիւ
Զօրավարք Արամայ
Բոլորեցէք հաւերամ
Պակ փառաց անթարամ
Կեցցէ Տրդատ արքայ։

68

ԵՂԲԱՑՐ ԵՄՔ ՄԵՔ

ի բիւր ձայնից բնութեան շըքեղ
Թէ երգք թռչին սիրողաբար
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար։
Զունին երբէք ձայն մի սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն։

(*) Գարծ Ա, Պէշիկթաշլեան

Տուր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մենք
Որ մշտկաւ էինք զատուած.
Բաղդին ամեն ոխ չարանենդ
Ի մի համբոյր ցրուին ի բաց.
Ընդ ասահղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:
Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով
Սրտին խորունկ, վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցողով.
Ընդ ասահղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն:

Մէկտեղ լայինք մենք ի հընաւմ . . . .
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և ըղխնտուում
Որ բաղմաճնուն ըլլայ մեր Ջան.
Ընդ ասահղօք ի՞նչ կայ սիրուն
Քան անձկալի Եղբայր անուն:

Մէկտեղ հոգնինք մէկտեղ ցանենք
Մէկտեղ թափին մեր քրտինքներ
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ ասահղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն:

69

Ի ՄԻՈՒԹԻՆ ՀԱՅՈՑ (*)

Ահա հրեշտակ ոսկեփեղուր թռուցեալ բարձուստ երկ-
նաճեմ՝
Հայոց բազդին հեծեալ ի կառս բարձր գոչէ զուար-
թաղէմ.

Հզօր պատգամ՝
Ի վերուստ գամ՝
Մխիթարեալ Հայք
Եւ նոր ձեզ կեանք։

Տրուին ուժգին և լանջք և սիրտ.
Խաղայ արիւն ի թինդ ի թինդ.
Մեղքդ կաթի Սուրբ սէրն ի խինդ
Յառաքինոյն ի Հայու սիրտ.
Սիրաբորբոք համբոյրք բղխեն
Արտասուաթոր աչկունք ցօղեն

Արինք Հայկազունք
Ի սէր փութացուք,
Եռանդուն մատիք
Ի համբոյր հեզիկ.

(*) Գործ Գէորգ Ապասուլլահ։

Տուք համբոյր մի՛ ևս
Բայէք ղձեր թևս,
Տուք համբոյր մի՛ ևս
Սիրոյ է պարգևս
Կեցցեն յաւերժ վեհ հայկապունք
Անմահութեան սիրուն սերունդք
Սեղ են վկայ երկիր երկին.
Անկաւ պարխակ ժանտ նախանձուն ոչ ի շանթից ա-
հարկու
Այլ յանարկի ևեթ սիրոյ վերատացեալ կենատու
Երկին երկիր
Կան ի յակճիռ
Ընդ Հայ ազգիս
Բիւր հրաշալիս
Բացցին անդունդք սեաւ անյատակ
Ծածկել զբաղդին հին յիշատակ
Տիեզերաց բացցին մատեանք
Անդէն դրոշմիլ Հայոց պարծանք
Կեցցէ Հայոց սէր պանծալի
Բերող փառաց նախանձելի:
Արիք Հայկապունք ևն. ևն.
Ի սէր փութացուք ևն. ևն.

70

ԳԱՐՈՒՆ

Ո՛հ ի՞նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչէս հովիկ
Ծաղկանց վրայ դուրգուրալով
Եւ մաղերուն կուսին փափկիկ
Բայց չէս հովիկ իմ հայրենեաց
Գլնա՛ անցիր արտէս ի բաց։
Ո՛հ, ի՞նչ աղու և արտադին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոց ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քոյ ձայնիկ,
Բայց չէս թռչնիկ իմ հայրենեաց
Գլնա՛ թռիր արտէս ի բաց։
Ո՛հ, ի՞նչ մրմունջ հանես վրտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային զերկնք վարդն ու աղջիկ.
Բայց չէս վրտակ իմ հայրենեաց
Գլնա՛ հոսէ արտէս ի բաց։

(*) Գրիչ Պ. Մ. Պէշիկթաշլեան

Թէպէտ թռչնիկ և հոմն Հայոց
Ամերակաց թռչին վերայ
Թէպէտ պղտոր վըտանգն Հայոց
Նոմինեներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց
Նոքա չերթան սրտէ ի բաց։

71

ԽՐԱԽՈՅՍ Ի ՄԻՈՒԹԻՒՆ (*)

Դուռ նոր Հայրենիք, դուռ նոր ազգութիւն
Դարուս շնորհիւ պարգք և իրաւունք
Սահման և կշիռ թոթովել որ գիտցնաք
Ո՞վ Հայաստանի պանդուխտ զաւակունք
Կրնա՞նք արդ զոհել կրնանք ամէն բան
Անձնական կըրից մատնել անխընայ
Եւ Օտարին շահն Ազգին վնասող
Ո՞վ կրնայ խնդրել որ այն եղեռն Հայ
Զգոյշ, ով Հայեր, զգոյշ կենանք միշտ

(*) Գրած Ս. Պ. Պ. Փափազեան

Քանզի ապրիլաւ զանան նեռեր
Մեր խոցուած սրտերն կրկին խոցելու
Պահենք զայն ամուր սիրոյ՝ վահանաւ
Մխիթարն ըլլայ զբրահ անվրդանգ
Եւ անհամաձայն թէ գտնուինք մեր մէջ
Այլոց միջամուտ ներենք ոչ երբէք։
Զատ ու հաւասար, ամենքս ալ եղբայր
Հեռատես, ըզդոյշ և դրծն անդուշ
Ազգային կամաց հրպատակ անխօս,
Այսպէս կրթուի Հայ մանկութիւնը
Այսպէս պատրաստուի պատանեկութիւնն
Ու երիտասարդութիւնն ըլլայ անընկուն
Աներ ախոյեան Ազգին իրաւանց
Ու թող ծերութիւնն հակէ լոջամիտ
Հայոց բախտն ու Արև յուսով ողջունել։

72

ԳԱՏՐԻԼ

Ա. ՉԵԻ

ՉԵՌՔ ՉԵՌՔԻ

Դուք մէջէն ես քովէն
Անցնելինք դիմաց փոխանք տեղ
Նոյն ճեռով տեղերնիս
Դառնանք միատեղ
Սլեծաճան մէկ մ՝ առաջ
Մէկ մ՝ ալ ետև քայլ փոխանք
Ապա տանք աջ 'ի յաջ
Կլոր մը ճեմանք։
Օ՜ն ճեռք ճեռքի բարեկամք
Ընկեր թև տուր շուրջ դառնանք
Արդ կրկին մեր նախնի
Ընկերին երթանք,
Հապա ոտոտանք գիրկ գրկի
Երթանք անդին պարելով
Ետ դառնանք նոյն ոտքով
Կայնինք քովէ քով։

(*) Գործ Պ. Զաւիրասոնճեան

Բ· ՁԵՒ

Մէկ մը առաջ երկուքնիս
Մէկ մ՚ալ դառնանք տեղերնիս
Իսկ այս անգամ դուն ասդին
Ես դիմաց անցնիմ
Մէկ մ՚ալ ետքը դէպ ի ձախ
Ասկէ մեր տեղն ընթանանք
Զուարթ կայթենք և ուրախ · ·
Ալեծածան մէկմ՚առաջ
Մէկ մ՚ալ ետև քայլ փոխենք
Հիմայ ալ տանք աջ 'ի յաջ
Կլոր մը ճեմենք։
Զորսա ալ արդ առաջ խաղանք
Կրկին տեղերնիս դառնանք
Յետոյ փոխն 'ի փոխ անցնինք
Դիմացը կայնինք։

Գ· ՁԵՒ

Գալենք հիմայ դէմ դէմի,
Հարպա բռնենք թև թևի
Յետոյ մէկ մ՚ասդին դառնանք
Մէկ մըն ալ անդին
Մէկ մը յառաջ դէմ դէմի

Պարենք երկուքս դառնանք
Մէկ մ՚ալ պարենք նոյն ձևով։
Երթանք ընկերուս քով։
Կալմենք շրթայ չորսերնիս
Մէկ հոս մէկ հոն ծռծանինք
Ապա ամենայն ընկեր
Դիմացի կողմն անցնինք
Զորս ալ արդ առաջ խաղանք
Կրկին տեղերնիս դառնանք
Յետոյ փոխն ի փոխ անցնինք
Դիմացը կայնինք։

Դ. Զեր

Դեպ ի առաջ քով քովն
Հիմակ երթանք դառնանք մերովն
Յետոյ մէկ մ՚ալ հոն անցնինք
Դուն հոն ես հոս զատուինք
Արդ ես մինակ նազեմ ճեմեմ
Մէկ ոտք մը հոս մէկ հոն նետեմ
Կայթեմ ոտանում զերթ մ՚ուրախ
Ըլայ հանդէս ուրախ
Արդ նոյն քայլով յիս եկէք
Երեքդ մէյ մ՚ետև գացէք
Կրկին ամէնդ դէպ ինծի

Յետոյ նոյնպէս դէպ ետի
Զորսս կէս կլոր արդ դառնանք
Յետոյ քիչ մը հեռանանք
Ետքն ալ ասկէ հոն անցնինք
Մեր բուն տեղիկը կայնինք։

Ե. ՉԵՒ

Հիմակ առաջ քով քովէ
Երթանք դառնանք մերովէ.
Յետոյ մէկ մ՝ալ հոն անցնինք
Հոն հոս բաժնուինք։
Ալեծաձան մէկ մ՝առաջ
Մէկ մ՝ ալ ետև քայլ փոխենք
Հիմայ ալ տանք աջ ի յաջ
Կլոր մը ճեմենք։
Ընկերք իրար քալեցէք
Հոս եկէք մէկ մը դարձէք
Մենք ալ ընկեր ընդ ընկեր
Յետոյ օտարը երթայ ետ։
Զորսս ալ արդ առաջ խաղանք
Կրկին տեղերնիս դառնանք
Յետոյ փոխն ի փոխ անցնինք
Դիմացը կայնինք։

Զ. ՁԵՒ

Անցնինք երթանք շիտակ առաջ ամենքնիս
Դառնանք դիմենք այր և ընկեր տեղերնիս
Թև թև դէմ դէմ երկանաքար դարձնենք
Փոխենք ձեռքեր այս կողմ ալ շրջենք
Ձեռք ձեռք տանք ընկեր թև տուր շուրջ դառնանք
Հապա ոտոստենք դիրկ դրկի հոն անցնինք
Անկէ դարձեալ մեր ընկերին քովն երթանք
Յետոյ նոյն ոտքով պարելով ետ քաշուինք։

73

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ (*)

Տարի մ'ալ անցաւ
Գնաց սահեցաւ
Ալ դու Հայ զինուոր
Թափառական մնաս
Յերկիր հեռաւոր

(*) Գրած Մ. Ս. Յ. Անդրէասեանց

67 (*)

Արդ հրամանովն Աստուածային
Բազումք եկեալ ընդ փեսային
Պալեալ ձեռօք գնս կու տանին,
Մնաք բարով ես գնացի.
Շատ խնդացի և շատ լացի,
Նանի Ջան մնաք բարով ես գնացի։

Նանի սիրես լոյս հաւատդ,
Զմոռանաս քո զաւակդ,
Հալալ անես աշխատանդ.
Մնաք բարով ես գնացի.
Շատ խնդացի և շատ լացի,
Նանի Ջան մնաք բարով ես գնացի։

Ով իմ ազնիւ հայր իմ, դուստր մայր իմ.
Զվշտանաս թէ բաժան իմ.
Նանի սիրես լոյս հաւատդ,
Զմոռանաս քո զաւակդ,
Հալալ անես աշխատանդ.
Մնաք բարով ես գնացի.
Շատ խնդացի և շատ լացի,
Նանի Ջան մնաք բարով ես գնացի։
Ահա տամ քո բալանին,
Ա՛ռ իմմէն տուր քո հարսին.

(*) Ժողովրդական երգերից.

Ցանի սիրես լոյս հաւատդ,
Զմոռանաս քո զաւակդ,
Հալալ անես սիպտակ կաթդ,
Մնաք բարով ես գնացի.
Շատ խնդացի և շատ լացի,
Ցանի Չան մնաք բարով ես գնացի։

68 (*)

Ով հիր և Տիկ դարձար.
Տիահան չարչարվեցար.
Հալվարի դարիդուսին
Տուինք մշակի ուսին։
Ո՛վ. ով սուրբ Տիգոր
Լուսէդ բաց մեզ ողորմեա։

(*) Թարգմանեալ։

69 (*)

Փչուլ էապէս ժամանակն, յոյս ու հաւատ սէր չկայ,
Մաշվիլ է ճշմարտութինն, մէջ խմանող տէր չկայ.
Բռնիլինք միր միղաց Չինդէքն, մէկ մէկու բամբասելով,
Պատրվեցաւ խտակութինն, հաւատով հէրն ու մէր չկայ:

Հասաւ միր միղաց պատիժն, խմացէք ինչպէս բան է.
Էլ մարթուն հաւատալ չկայ, էս ինչպէս դատաստան է.
Տանջանք ունինք դժուխկումը, ով լեզուով սթամ կօնէ.
Ահալի վարպիան պատու չունէ, մէկ ժանակ տէր չկայ:

Խափանուվից բարերու միտին, սէրով տալամ տալ չունինք.
Պէտկէ մէկամէկու բանբասինք, աւելի ափալ չունինք.
Ճշմարիտ յուսով մարթ սիրինք միասին ման դալ չունինք,
Ինչ է միր միղաց հարցմունքը, էլ քուր ու՝ ախպէր չկայ:

Վիրավորուեցանք հաւոխցն, օրէնքն խաւարումէ,
Շատ մարթ կայ հոքուն չէ հոքում, մարմինը զարթաւ-
ում է.
Ինչիկ-Նովայ միխիդ լաց, ինչ անձդ բաշարումէ.
Սուեցաւ շատն աշխարքիս, այսուհետև խէր չկայ:

(*) Գրուած Սաղմոս Ինչիկ Նովայի:

70

ԵՐԵԽԱՆՑ ԵՐԳ

Արևգակ արևգակ դուս արի,
Հէրն ու մէրդ էկիլ է,
Օսկէ բլէթ բերիլ է,
Պատի ծակը դրիլ է.
Աչուին էկիլ է տարիլ է,
Կատուն էդնէն վազիլ է,
Գոմշի վուտը կտրիլ է,
Աղամանը վիթիլ է,

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Ռ.Հ Публичная Библиотека
7/XI-1922
инвент. Мясникиана
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ծանօթ. երես. 56-ից մինչև 67 ոչ թէ թերթեր են պակաս, այլ տառասխալ է։

59, 60, 61 63, 64, 67 և 69 համարաւ երգերը գրուած են Տաճկաստանում և վերաբերում են այն տեղի Հայերին։

20061

20013

3n

Г. 41